

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ ԽՈՐՀԾՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԲԱՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

●

Արտ

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

# ԲԱԴՐՁԱՆ

ՅԵՎ

# ՏԱՐԴԵՂ



ԳՅՈՒԴԱՀԱՆ

1936

ՅԵՎԵՂԱՆ


30 JAN 2018

ԿՈՒՏՆԱՑՈՎԱԿԱՐ ՅԵՎ ԽՈՐՀՏՆԵՑՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՆԳՈՐԻ ԴՐՁԴՅՐԱՆ

ZULU ZULU ZULU - ԱՅԻՖ-ՊՇՂԱՐՄԱՉԱՐԱԲՈՒԹԱԿԱՆ ՎՈՐՉՈՒՔՈՒՆ

Ա. ԿԱԶԱՏՐԵԱՆ

# ԲԱԴՐՋԱՆ ՅԵՎ ՏԱՔԴԵԼ



ԳՅՈՒՂՂՐԱՑ - ՅԵՐԵՎԱՆ 1936

## ԲԱԴՐՁԱՆ

Բագրջանը հարավային բանջարանոցների հիմնական կուլտուրաներից մեկն ե, վրը խոշոր նշանակություն ունի թե աշխատավորության սննդի գործում, թե արդյունաբերության մեջ:

Նա գործ և ածվում բազմատեսակ կերակուրների մեջ յեփած, խորոված և տապակած վիճակում, վորպես համեզ սննդատուապողաբանջար:

Պահածոների արդյունաբերության մեջ բագրջանը նույնպես խոշոր տեղ է բանում. նրանից պատրաստում են խավյար (ԱԿԲՃ)՝ Փարշիրովկա և սոուսով տապակած բագրջան՝ հունական ձևով, վորոնք մեր լավագույն պահածոների շարքին են պատկանում:

Ծնորհիվ իրենց բարձր վորակի, բագրջանի պահածոներն ամենուրեք մեծ սպառում ունեն, մանավանդ ձմռան ամիսներին, յերբ թարմ բանջարեցների պակասն անհրաժեշտ և լինում ըրացնել պահածոների միջոցով:

Բագրջանի թարմ խավյարն ամուն ամենահարգի նախաճաշերից մեկն ե և, վերջապես, մեր գաշտավայրում բագրջանն ամենորյա կերակուրների անբաժան մասն ե կազմում:

Սակայն սրա հետ միասին, պետք ե ասել, վոր, շնորհիվ բարձր ջերմություն պահանջելուն, բագրջանի մշակությունը կենարոնացած ե զլխավորապես դաշտավարական շրջաններում, իսկ լեռնային և մասամբ նախալեռնային գոտիներում ու հյուսիսային շրջաններում նա շատ սահմանափակ և քիչ ե մշակվում: Այս դրությունը նորմալ չհամարելով, բանջարաբուծության առաջինից ե գրվում համապատասխան ազրուծենարկումների կիրառման միջոցով և սելեկցիոն համապատասխան սորտերի առաջացումով բարձրացնել հարավային, ջերմասեր կուլտուրաների, վերաց թվում և բագրջանի ու առաջեղի, մշակությանը գեպի լեռ-



11-280739/

Նային և նախունային գոտիները ու Նրանց դարձնել մասսայական սպառման բանջար:

Բաղրջանիք բարձր սննդատում հատկությունները կայանում են նրանում, վոր, բացի սպիտակուցային նյութերից, ածխաջրերից և ճարպերից, նրա մեջ գտնվում են մեր որդանիզմի համար այնքան անհրաժեշտ հանքային աղեր և վիտամիններ, վորոնց բացակայության գեղքում մարդու որդանիզմը նորմալ չի զարգանում և առաջանում են մի շարք նյարդային, մկանային և գոսկային հիվանդություններ: Այդ հիվանդությունների բուժման միակ միջոցն որդանիզմը վիտամիններով ապահովելու եւ:

Բացի կերակուրների մեջ թարմ վիճակում գործածելուց, բաղրջանը չորացնում էն ձմբան համար, թթու յեն դնում և նրանից մուրաբաներ ու ցուկատներ են պատրաստում:

Այսպիսի բաղմազան և լայն գործածության հետեւնքով ե, վոր բաղրջանիք տարածությունները տարեցտարի ավելանում են և բարձրանում դեպի նախալեռնային և լեռնային գոտիները: 1935 թվին Հայաստանում բաղրջանի մշակության տակ գտնվում եր 98 հեկտար տարածություն, իսկ 1936 թվի համար ծրագրվում է այդ արդածությունը հասցնել 120 հեկտարի:

## Ի՞նչ Պետք է ԽՄՍՆԱԼ ԲԱԴՐՁԱՆԻ ՄԱՍԻՆ

Բաղրջանը պատկանում է նույն մորմազգիների ընտանիքին, ինչ վոր տոմատը, տաքեղը և կարտոֆիլը: Սա միամյա բույս է՝ 70—120 սմ բարձրության խիստ ճյուղավորված ցողունով, խորը գնացող արմատային սիստեմով, վորի զլխավոր արմատը խորանում է մինչև 30—50 սմ, իսկ նշա ճյուղավորումներն հորիզոնական ուղղությամբ տարածվելով հասնում են մինչև 1—1,2 մետր յերկարության:

Բաղրջանը շուտ փայտացող բավականին ամուր ցողուն ունի, վորի շնորհիվ ամբողջ բույսը կանգուն և և թփանաւ: Ցողունը և ճյուղավորումները տարբեր փոփոխակների մոտ լինում են կանաչ, մանիչակագույն և զագանակագույն: Նույն դրայնի յեն լինում նաև տերևակոթունները և տերևի ջղերը:

Տերևները ձգածե են կամ յերկարավուն սրտածե, վորոշ չափով բլթակագոր, կանաչ գույնի և պատած են խիտ թափով, վոր հեշտությամբ ձեռքով մաքրվում ե, դրա շնորհիվ տերևներն ընդունում են մոխրագույն տեսք:

Բաղրջանն ունի խոշոք, սպիտակ-մանիչակագույն ծաղիկներ, վորոնք բաղկացած են 5 պսակաթերթից, 5 կանաչ գույնի բաժակաթերթից, 5 առեջքից և մեկ վարսանդից: Բաղրջանը ինքնափողություն բույս և, սակայն մեր հարավի տաք պայմաններում տալիս ե զորոշ ٪ իտաձև փոշոտում: Եայած փոփոխակին, պառազը լինում է աարբեր ձեր, տարբեր մեծաթիւան և տարբեր գույնի:

Հստ ձեր, պառազը լինում է յերկարավուն գլանածե, տանձածե, կլոր և յերկարավուն ծոված: Դույնը կարող է լինել մանիչակագույն, սև, սեղապտավուն, շագանակագույն, կանաչ-մոխրագույն և սպիտակ: Սակայն օրանցից արդյունաբերական նշանակություն ունեն միայն մուգ-մանիչակագույն, շագանակագույն և սեղապտավուն գույնի փայլուն տեսքով պտուղները: Հստ պաղի ձեր, մեղ մոտ՝ Հայաստանում տարածված են գլխավորակես յերկար գլանածե բաղրջանները, իսկ տանձածե (բուղարական) և կլոր (ամերիկյան) տեսակները շատ քիչ սպառում ունեն, թեև պետք է ասել, վոր սպանածոների արդյունաբերության համար սրանք շատ պիտանի և հարմար տեսակներ են: ԽՍՀՄ-ի հարավային շրջաններում՝ Ուկրաինայում, Վոլգայի շրջանում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, ինչպես և Սև ծովի շրջանում մշակվում ե բաղրջանի զլխավորակես տանձածե տեսակները, վորոնք հայտնի յեն բուլղարական անունով: Բաղրջանի յերկար տեսակները տարածված են (տեղական) անունով, Անդրկովկասում, Իրանում, Թուրքիայում և միջին Ասիայում:

Բաղրջանի հայրենիքը Հնդկաստանն է, ուր նա մշակության մեջ յեղել և մեր գարարչանից մի քանի հազար տարիներ առաջ: Այստեղից նա աստիճանաբար տարածվել է դեպի Արևելք՝ Ճապոնիա, Չինաստան և դեպի արևելուտք՝ յելլուպական յերկրները, ուր նա առաջին հերթին տարածվել է Հունաստանում, Բուղարիայում, Իտալիայում, Սպանիայում, Ֆրանսիայում և ալիս:

Ամենից շատ տարածված ե բաղրջանը ասիական յերկրներում: Տաճկաստանում և իրանում:

Ռուսաստանում բաղրջանի մշակությունը սկսել է տարածվել XIX դարում, և այժմ ԽՍՀՄ-ում նա մեծ չափով մշակվում է Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Անդրկովկասում, Թուրքիայում և Ստորին Վոլգայի մարզում:

## ԲԱԴՐՁԱՆԻ ՓՈՓՈԽԱԿԱՆԵՐԸ

Հայաստանում մշակվող բաղրջանների մեծ մասը պատկանում է Իզմիրի բաղրջանների տեսակին, վորոնք ունեն հետեւյալ հկարգիրը:

Պտուղները գլուխածեն՝ 15—18 սանտիմետր յերկարությամբ և 6 սմ տրամագծով, ուղիղ կամ քիչ կեռված: Պտուղը կոթունի մոտ քիչ բարակում է, իսկ ծայրի մասում կլոր կամ քիչ կոնաձև է: Պտղի գույքնը մուգ-մանիշակա-ջագանակագույն է: Հասունանալուց սերմացուն ստանում է գորշ-դեղին գույն: Թե պտղի ձևով, և թե իր վորակով սա լավագույն տեսակն է կերակուրների և պահածոների արդյունաբերության համար: Միսն սպիտակ է, համեղ, միջակ քանակի սերմերով: Տերևաթիթեղը ձվածեն՝ սեպաձև կտրված հիմքով: Տերևի յերկարությունը՝ 20—22 սմ է, լայնությունը՝ 14—16 սմ: Տերևակոթունը յերկար է, ցողունը՝ բարակ և խիստ ճյուղավորված: Բույսի բարձրությունը՝ 80—110 սմ է: Բավականին վաղահաս տեսակ է, հասունանում է ցանքից 110—120 որում, հեկտարից տալիս է 15—18 տոնն լավորակ բերք, վորը համապատասխան ազդրուենարկումների միջոցով կարելի յի հասցնել մինչև 20—30 տոննի:

Այս տեսակին են պատկանում մեր տեղական փոփոխակները՝ «Յերևանի տեղական բաղրջան»—«Հաջի-Ելլազի» և «Բորչալուս-ի բաղրջանները»:

Բացի մեր տեղական փոփոխակներից, արժանի յեն ուշադրության արդյունաբերական հետեւյալ փոփոխակները:

1. «Յուլգարական մանիշակագույն»:—Պտուղները մուգ-մանիշակագույն են, յերկարավուն տանձածե, ծայրի մասում լայնացած, 12—15 սմ յերկարությամբ և 9—10 սմ տրամագծով: Միսը նուրբ է, սպիտակ գույնի և համեղ: Տերևները ձվածեն, կտրված հիմքով և թույլ բլթակներով: Տերևները խոշոր են՝ 25—30 սմ յերկարությամբ և 15—20 սմ լայնությամբ, կարճ տերևակոթուններով: Ցողունն ամուր է, հաստ, արմատավղի մոտ 4—5 սմ տրամագծով: Թփի բարձրությունը՝ 100—150 սմ է, թուփը կանգուն է: Բավականի ուշահաս տեսակ է, բայց արդյունաբերության համար սիանգամայն պիտանի:

2. Մանիշակագույն գանտն:—Կարճ թուփ ունեցող բաղրջան է, թփի բարձրությունը՝ 45—55 սմ, ցվրաված մուգ-մանիշակագույն ճյուղերով, վորից թուփը փռված ձև է պրանում: Տերևները յեր-


կարավուն ձվածե են, բավականին խոշոր, մանիշականաչափուն տերևաթիթեղով և մուգ-մանիշակագույն ջղերով: Պտուղները յերկարավուն ձվածեն, 8—10 սմ յերկարությամբ, 6—7 սմ լայնությամբ, սկզբանից ակագույն Շատ վաղահաս փոփոխակ է, հասունանում է 80—100 որում և միանգամայն պիտանի յի մեր լեռնային շրջաններում տարածելու համար:

3. Դելիկատսն:—Ունի փոքր, կոմպակտ կարճ թուփ, մուգ-մանիշակագույն ցողունով և մոխրականաչափույն տերևներով: Պտուղները մանր են, ովալ ձևի, համեղ, սպիտակ-կանաչավուն մուզ: Շատ վաղահաս փոփոխակ է, կիսափափած թփով, առատ պտղաբերությամբ: Կարելի յի առաջարկել մեր լեռնային շրջանների համար:


4. Նախալոր:—Պտուղները սկզբանիշակագույն են, տանձածե-յերկարավորն, մանր՝ 12 սմ յերկարությամբ և 5—6 սմ տրամագծով: Միսը սպիտակ-կանաչավուն է: Տերևները մանր են, ձվածե, թույլ բլթակներով: Ցողունը բարակ է, ճկուն, բաղմաթիվ ճյուղավորումներով, վորի ջնորհիվ թուփը փռված է, համարյա գետնամերձ: Սա նույնպես առատ պտղաբերող վաղահաս փոփոխակ է, վորը կարող է հաջող մշակվել մեր լեռնային գոտիներում: Նկ. 1. Տեղական բաղրջան

**ՀՈՂԸ, ԿԼԻՄԱՆ, ՏԵՂԸ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՑԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐԸ**

Բագրջանը պահանջում է բարձր ջերմություն, պայծառ, արեառատ որեր և յերկար վեգետացիոն շրջան: Նրա աճեցողության նվազագույն ջերմաստիճանը հավասար է 12—15° Ծ, ոպտիմում 25—30° Ծ, իսկ առավելագույնը՝ 40—45° Ծ: 80° տակ, բաղրջանի անեցողությունը կանգ է առնում, իսկ 0° տակ



ցրտահարվում են Մեր դաշտավայրի պայմաններում, մշակության ամբողջ ժամանակաշրջանում, պահանջում ե 3000—3500<sup>0</sup> ջերմություն։ Այս պատճառով ել նա մշակվում ե գլխակորապես տաք յերկրներում։ Սակայն Պօղաքանչարաքուծության Զոնայ կայանի փորձերը ապացուցել են, որ ջերմուցային սածիների յեվ համապատասի խան ազրուելուարկումների միջոցով բադրջանի մշակույթունը հնարավոր է բարձրացնել մեր լեռնային գոտիները։



Նկ. 2. «Բաւլզբական մանիչակագույն»—բաղրջուն

Ստվերու և վատ լուսավարված հողամասերում բաղրջանը լոգ չի աճում, այդ պատճառով ծառերի ստվերում բաղրջան մշակել չի կարելի։ Բաղրջանի հաջող մշակության համար խոշոր նշանակություն ունի նաև ողի չորսեթյունը։ Խոնավ, ամպամած և անձրեսու տեղերում թուփը թեև փարթամ և աճում, բայց վատ և պտղաբերում և բույսը չուտ և հիվանդանում։

Բաղրջանը սիրում ե պարաբա, թափանցիկ և լավ ստրոկատուրա ունեցող հողեր։ Նրա համար լավ են ավազակագային, հումուսով հարուստ հողերը։ Լավ մշակված հարուստ կավա-ավազային հողերում ել բաղրջանը հաջող բերք և տալիս։ Ծանր կավային հողերում բաղրջանի մշակությունը կարելի յե կատարել հեկտարին 30—40 առն որգանական պարաբանյութ տալուց հետո։ Սևահողերում բաղրջանը շատ փարթամ և աճում, սակայն ուզ և պտղաբերում և քիչ բերք և տալիս։ Ստորեկըյա բարձր ջրեր ունեցող և հահեցած հողերում բաղրջան մշակել չի կարելի։ Բաղրջանի հաջող մշակության համար մեծ նշանակություն ունի

հողի ստրուկտուրան, նրա թափանցիկությունը, ջրուժակությունը և ջերմունակությունը, վորպեսզի նրա արմատները խորը թափանցելով հողի մեջ՝ լավ ճյուղավորվեն և աղահօվեն ջրի և սննդանյութերի նորմալ մատակարարումը։

Հողի մեջ յեղած պարաբանյութերի հանդեպ բաղրջանը պահանջում է, այդ պատճառով ել պարաբատացման խնդիրը կարենու տեղ և բռնում բաղրջանի մշակության ժամանակ։ Վորպես որգանական պարաբանյութ, բաղրջանին պետք է տալ կամ փասծ գոմազը, կամ անային ազը, կամ ֆեկալ պարաբանյութեր՝ հեկտարին 30—40 առն ի հաշվով։ Զի հանձնարկում բարձրջանին թարմ գոմազը նպաստում և բույսերի հոռանալուն և մոլախոտերի զարգանալուն։ Փորձերը ցույց են ավել, վոր տնային ազը և կանոնավոր պատրաստած խառնազը նույն ազդեցությունն են թողնում, ինչ վոր փտած գոմազը և արգում են հողին նույն քանակությամբ։ Ֆեկալ պարաբանյութերը, այսինքն՝ մարդու կղկղանքը, վորպես ավելի ուժեղ պարաբանյութ, տրվում և ավելի քիչ քանակով։

Որգանական նյութերով հարուստ հողերում բաղրջանին պետք է տալ հանքային պարաբատացում՝ հեկտարին 40—60 կիլոգրամ մաքուր աղոտի և 60—90 կիլոգրամ ֆուֆորաթթվի հաշվով, այսինքն՝ 200—250 կգ աղոտական պարաբանյութ (ծծմբաթթվային ամոնիյ, սելիտրա, ցիանամիդ, աղոտաթթվային ամոնիյ և այլն) և 450—500 կգ սուպերֆոսֆատ։

Փորձերն ապացուցել են, վոր կես նորմա որգանական և կես նորմա հանքային պարաբատանյութերի միասնական գործածությունը տալիս և ավելի բարձր եփեկտ, քան որգանական և հանքային պարաբատանյութերը՝ ամեն մեկն առանձին վերցրած, և բարձրացնում և բաղրջանի բերքատվությունը 50—100 % ով։ Այս գեպքում որգանական պարաբատանյութերը հողը հումուսով հարստացնելով, լավացնում են նրա ստրուկտուրան, բարձրացնում են նրա կլանողականությունը, վորի շնորհիվ և հանքային պարաբատանյութերի մեջ տված սննդանյութերը լրիվ կլանվում են հողի մեջ և լավ ողտագործվում բույսի կողմից։

Յերևանի Պաղաքանջարաբուծական Զոնայ կայանի փորձերն ապացուցել են, վոր մեր դաշտավայրի հողային պայմաններում, անզամ առանց որգանական պարաբատանյութեր մտցնելու, միայն հանքային պարաբատանյութերի գործադրումը, կանոնավոր մշակության դեպքում, առաջացնում ե բերքի 50—60%, բարձրացնում։

Այսպես, որինակ՝ կայտնը 1934 թվին վերջացնելով բազրջանի հանքային պարարտացման դողաների փորձերն ազումի և ֆուֆորի վերաբերյալ, ստացել ե հետևյալ արդյունքները՝

#### I. Ազատի դոգաների ուսումնասիրարյան արդյունքները

Ներցված և ազումի հետեւյալ դոգաները՝ հակառակին 60 կգ, 90 կգ և 120 կգ մաքուր աղուա Փորձը գրած և ծծմբաթթվային ամսնիումի հետ։

Պարարտացման դողան	Բերքը 1 հեկտարից		Բերքը տոկոս- ներով
	Քաշը—ցենտ	Քանակը հատով	
1. Սառուղիչ (առանց պարարտացման) . . . . .	98,5	98.524	100
2. Ֆոն—սուպերֆոսֆատ . . . . .	115,4	103.926	129
3. Սուպերֆոսֆատ+աղու 60 կգ . . . . .	183,7	146.548	187
4. Սուպերֆոսֆատ+աղու 90 կգ . . . . .	244,6	181.231	248,9
5. Սուպերֆոսֆատ+աղու 120 կգ . . . . .	233,9	178.006	235,7

Այսպիսով, տեսնում ենք, վոր ազուտական և ֆոսֆորական պարարտանյութերի միասնական գործադրումը տալիս ե բերքի խոշոր բարձրացում։


#### II. Ֆոսֆորի դոգաներն ազատի ֆոնի վրա. արդյունքը յեղել և հետեւյալը

Պարարտացման դողան	Բերքը 1 հեկտարից		Բերքը տոկոս- ներով
	Քաշը—ցենտ	Քանակը հատով	
1. Զպարարտացրած սառուղիչ . . . . .	190,6	143.729	100
2. Ազուտական ֆոն . . . . .	209,8	162.306	110,8
3. Ազուտ+սուպերֆոսֆատ 60 կգ . . . . .	253,3	179.960	133,3
4. Ազուտ+սուպերֆոսֆատ 90 կգ . . . . .	295,3	203.904	155,3
5. Ազուտ+սուպերֆոսֆատ 120 կգ . . . . .	268,0	187.377	141,2

Սակայն պետք ե ասել վոր հանքային պարարտանյութերի այս դողաները բոլոր շրջանների հողերի համար նույնությամբ ընդունել չի կարելի և ամեն մի տնտեսության համար պետք ե վորոշվեն առանձին, յելնելով հողի հատկություններից, վորի համար անհրաժեշտ և խորհուրդ հարցնել Հողբաժնի կամ ՄՏԿ-ի գյուղատնտեսից։

Այսպիսով, ուրեմն, ակնհայտ է, վոր մեր բանջարաբուծական կոլտնտեսությունների և խորհունտեսությունների զաշտերի բերքարտության բարձրացման գործում հանքային պարարտանյութերի գործադրումը խոչըր լծակ ե հանդիսանում։ Որգանական պարարտանյութերը պետք ե մտցնել հողը աշխան հերկի ժամանակ, կամ, ծայրահեղ դեպքում՝ վաղ վարսան կրկնահերկի ժամանակ։ Այդ գեղագումը պարարտանյութերը պետք ե զաշտ փոխադրվեն աշխան և ձման ամիսներին և կույտերով հավասարապիս դասավորվեն դաշտում, իսկ գարունը բացվելուց անմիջապես փռվեն և հողի տակը տրվեն կրկնահերկի ժամանակ։

Հանքային պարարտանյութերը տրվում են հողին գարնան կրկնահերկի կամ փոցի ժամանակ։ Որգանական պարարտանյութերը՝ գոմազը, տնային աղը և այլն, պետք ե ցրվել գոմազը ցրող հատուկ մեքենայով և ապա հերկել, — իսկ մեքենայի բացակայության դեպքում կարելի յե ցրել նաև ձեռքով։




Նկ. 2. Գոմազը ցրող մեքենա

Հանքային պարարտանյութերը մացվում են հողը նույնպիս հատուկ մեքենայով, կամ զրա համար սգտագործվում են հացահատիկային սովորական շարքացանները։ Մեքենայի բացակայության դեպքում հանքային պարարտանյութերը շաղ են տալիս ձեռքով և ապա հողի տակը տալիս գութանով կամ փոցիով։ Պարարտանյութերը հավասարապիս շաղ տալու համար անհրաժեշտ ե նախապես բոլոր կոշտերը մանրել և արվելիթ բոլոր տեսակի նյութերը իրար հետ լավ խառնել և ապա մտցնել հողի մեջ։ Պարարտանյութերը կարելի յե տակ հողին համառարած ձեռք, կամ

մացնել միայն շարքերը, ի հարկե, գերադասելի յե պարարտացման համառարած ձեզ, Բագրջանի մշակության դեպքում հանքային պարարտանյութերը կարելի յե տալ հողին նաև սածիլումից հետո՝ կուլտիվացիայի ժամանակի կարելի յե նաև տալ մասմաս, ըստ վորում պարարտանյութերի մի մասը տալիս են հողին սածիլումից առաջ, իսկ մյուս մասը՝ հետագա կուլտիվացիայի ժամանակի:

Յանքաշրջանառության մեջ բաղրջանը տեղափորում են լրիդ



Նկ. 4. Յանքանի ռւնիվերուլ շարքացանը, վորը և ուրմ և ցանում և հանքային պարարտանյութ մացնում հողի մեջ

պարարտացումից յերկրորդ կամ յերրորդ տարին, այսինքն՝ որդանական լրիդ պարարտացում (60–80 տոնն մեկ հեկտարին) տալիս են բաղրջանին նախորդող կուլտուրային, իսկ հաջորդ տարին մշակում են բաղրջանը կամ առանց լրացուցիչ պարարտացման, կամ լրացուցիչ տալիս են միայն հանքային պարարտանյութեր: Բանջարանոցային 5–6 դաշտյա ցանքաշրջանառության մեջ, վորտեղ 2-րդ դաշտը տրվում է տոմատին, բաղրջանը տեղափորվում է 4 կամ 5-րդ դաշտում, տալով նրան 30–40 տոնն որդանական պարարտանյութ: Այդ դեպքում բաղրջանի համար լավ նախորդներ են հանդիսանում բոստանային կուլտուրաները՝ (սեխը, ձմերուկը, վարունդը և կաբաչկին), կամ թիթեռնածաղկավոր բույսերը (լորին, վոլուսը և սիսեռը):

Բագրջանի համար լավ նախորդ են հանդիսանում նաև պարարտացրած տերեարանջարները: Իր հերթին՝ պարարտացրած բաղրջանը լավ նախորդ է հանդիսանում բոստանային կուլտուրաների, լոբազգիների և արժատապուղների համար: Բագրջանի համար լավ նախորդներ են նաև միաժյա կամ բազմամյա թի-

թեռնածաղկավոր խոտաբույսերը: Բագրջանի հողը պետք է հերկել աշնանից՝ 20–22 սանտիմետր խորությամբ, ի հարկե, յելնելով գարելաշերտի հզորությունից: Սաղը հողերում խոր հերկ կատարել և խճու յենթահողը յերես բարձրացնել չի կարելի. այդ դեպքում վարը պետք է կատարել վարելաշերտի հզորությամբ, իսկ խորությունը ավելացնել հատուկ խորավարերով (ՊՕՎԵՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ), վորոնք գնալով ակոսի միջից՝ հողը փխրեցնում են առանց շուռ տալու, այսպիսով մի քանի տարում վարելաշերտի հզորությունն ավելանում է: Աշնան հերկի ժամանակի, ինչպես արդեն ասացինք, պետք է մացնել հողի մեջ նաև որդանական պարարտանյութերը:

Աշնան հերկը նովաստելով հողում խոնավության կուտակման, միաժամանակ նպաստում և որգանական մնացորդների քայլաւում, մոլախոտերի և մասամատուների ու հիվանդությունների. Դեմ պայքարելուն, լավացնում է հողի կազմությունը՝ փշրելով առաջացած բոլոր կոշտերը և թիթեռացնում և գարնան աշխատանքները:

Խոնավությունը լավ կուտակելու, ծյան և անձրեկի ջրերը լավ պահելու նպատակով, աշնան հերկը չեն փոցխում և թողնում են ձյան տակ ակոսներով, իսկ վազ գարնանը՝ գոլորշիացումը կասեցնելու համար՝ հենց վոր հողը յերեսից քիչ չորանա, աշնան վարը պետք է փոցխել: Այսուհետեւ դաշտը թողնում են փոցխված մինչեւ ապրիլ ամսի յերկրորդ կեսերը և սածիլումից մի 7–10 օր առաջ կատարում են կրկնահերկ: Այդ ժամանակ աշնանից հերկած հողը բավականին նստած և մոլախոտերով ծածկված է լինում, և գարնան կրկնավարը վոչնչացնելով մոլախոտերը, նորից փըթիթեցնում է հողը և նախապատրաստում սածիլման համար: Կրկնավարը կատարվում է ավելի սպիր, քան աշնանավարը: Գարնան կրկնավարից անմիջապես հետո հողը փոցխում են և ապա մարդոցում: Բոլոր դեպքերում ել հողը պետք է հերկել կամ փոցխել քեզ վիճակում: Թաց կամ ցեխ հողում վոչ մի աշխատանք չպետք է կատարել: Թե հերկի, թե կրկնահերկի և թե փոցխելու ժամանակ պետք է անպայման հավաքվեն և դաշտից դուրս բերվեն բազմայա մոլախոտերի (շայիր, զանզուրդան) տակորիկները և քարերը: Սրանով կիսով չափ կկրծատվի հետագա քաղնանի աշխատանքները և կհեղտանա մշակության մեջենայացնումը:

Այսպիսով, ուրեմն, հողի լավ մշակությունը և խոր հերկը՝ հետաքա կրկնահերկի և մոլախոտերի տակորիկների հավաքման

հետ միասին, բազրջանի բարձր բերքատվության անհրաժեշտ նախապայմաններն են հանդիսանում:

Դաընան կրկնահերկից և հողը փոցիսելուց հետո պատրաստում են բաղրջանի մարգերը և հավ սար կոկում: Մեր խոշոր տնտեսություններում մարգոցի աշխատանքները նույնպես կատարվում են տրակտորներով, վորոնց կցված հասուլի մարգոցները ցանկացած հասության թմբեր կապելով, քաշում են ուղիղ մարդեր և միաժամանակ փոցիսում զիգզագ փոցիսով, վորը հարմարեցվում է յերկու մարգոցների արանքում: Տրակտորը մեկ օրում մարգոցում է 7—8 հեկտար հող:

Բաղրջանի մշակությունը տարվում է հարթ մարգերում արքերով, շարքը շարքից 60—70 սմ և ըույսը ըույսից 35—45 սմ հետագորության վրա, նայած հողի բերրիությանը: Թմբերի վրա բաղրջան մշակելու կարիք չկա: Մարգերի լայնությունը, նայած հողի կազմության և թեքության, վերցնում էն 2,5—3 մետր, այսպես վոր մի մարգում լինում է 4—5 շարք, իսկ յերկարությունը, վորքան զրելու հնարավորությունները թույլ կտան՝ յերկար, վորպեսզի միջարքային տարածությունների քաղհանը և կուլտիվացիան կատարվեն մեքենաներով: Աղքատ հողերում, վորտեղ բադրջանի փարթամ աճեցնություն չի սպասվում, կարելի յերբո՞իցալ տարածությունները փոքր ինչ կրճատել: Բացի այդ, վաղահաս և փոքրապտուղ տեսակները տնկվում են խիտ, իսկ ուշահաս և խոշորապտուղ բաղրջանները, վորոնք դարձացնում են փարթամ թուփ, տնկվում են ավելի հետու:

Այսպիսով, մեկ հեկտարի վրա տնկվում է 30—40,000 համ սածիլ:

Բաղրջանի բազմացումը տարվում է սերմերի ցանքով, կիրառելով սածիլման յեղանակը: Յեթե տռմատի դեպքում վորոշ տեղեր գործադրվում են սերմերի ցանքը ուղղակի մշտական տեղում, ապա բաղրջանի վերաբերյալ այդ ասել չի կարելի: Բադրջանը բոլոր տեղերում մշակվում է սածիլների սիջոցով:

Հայաստանի գաշտավայրի պայմաններում բաղրջանի մշակությունը կարելի յետանել և բացությա, և ջերմոցային սածիլներով: Վաղահաս բերք ստանալու համար սածիլն անպայման պետք է պատրաստել կամ ջերմոցներում, կամ աաք մարգերում: Բացությա սածիլներն ուզ են դաշտ փոխադրվում և ուզ ել սկսում են պաղաքերել: Նախալեռնային և լեռնային գոտիների պայմաններում բաղրջանի մշակությունը անպայմանորեն պետք է տար-

վի ջերմոցային սածիլներով, վորովհետև բացությա սածիլները այս տեղ չատ յետ կընկնեն և բերք չեն տա:

Բաղրջանի թե ցանքի և թե սածիլման ժամկետները տարբեր լինաների համար վարոշելիս պետք է լենել տեղի կլիմայական պայմաններից, հաշվի առնելով այն, վոր բաղրջանի մատղաջիկերը և նոր տնկած սածիլները չատ դգայուն են անգամ ամենաթույլ ցրտերին և 0,5°—0,8 Ց. տակ արգեն ցրտահարգում են, ուրեմն սածիլը դաշտ կարելի յետուր բերել միմիայն ցրտահարությունների վախն խսպառ անցնելուց հետո, այսինքն՝ դաշտավարական գոտում ապրիլի վերջին—մայիսի սկզբին, նախալեռնային գոտում մայիսի 5-ից հետո, և լեռնային գոտում մայիսի վերջին—հունիսի սկզբին:

Ցանքը կատարում են այն հաշվով, վոր սածիլը մինչև դաշտ փոխադրվելը սածիլանցում մնա 45—55 որ, իսկ լեռնագոտիներում՝ ել ավելի, վորպիսի ժամանակամիջոցում նա առաջացնում է 5—6 տերե, ունենում է 15—18 ոմ բարձրություն, և տակիս և տնկելու համար միանգամայն պիտանի բույսերը Բույուը սածիլանցում դրանից ավելի չպետք է թողնել, վորովհետև այդ դեպքում նա չատ կձգվի, կդախանա և կսկսի ծաղկել: Յելներով վերոհիշյալից՝ մեր տարրեր կլիմայական գոտիներում բադրջանի ցանքի և սածիլման մոտավոր ժամկետները կարելի յեւնգունել հետեւյալ ձևով.

Զերմացնելուում	Ցանքը		Ցանքը		Ցանքը	
	Ցանքի ժամկետը	Պաշտ վաշտ փո- խադրելու ժամկետը	Ցանքի ժամկետը	Պաշտ վաշտ փո- խադրելու ժամկետը	Ցանքի ժամկետը	Պաշտ վաշտ փո- խադրելու ժամկետը
1. Բաշտա- գայլում	15/III—15/IV	25/IV—15/V	15/V—1/VI	15/V—1/VI	20/IV—5/V	15/IV—20/V
2. Նախալեռ- նային գո- տում	25/II—25/III	5/V—25/V	15/III—20/IV	10/IV—1/V	20/V—20/VI	10/V—15/VI
3. Լեռնային գոտում	10/III—10/IV	25/V—10/VI	25/V—10/VI	10/IV—15/VI	15/V—20/VI	10/V—20/VI

Պաղաբանջարարուծական Զոնալ կայանի 1934 թվի աշնանց դրած փորձերն ապացուցել են, զոր մեր դաշտավայրի պայմաններում, բայց ջերմոցների, տաք մարգերի և բաց սածիւնոցների ցանքից, բաղրջանի հիանալի սածիւներ կարելի յե ստանալ գոնդուրմա ցանքով (ձմռացանով), փորից գարնանը ստացվում են միանգամայն առողջ, հաստ, մուգ գույնի, դիմացկուն բույսերը Դոնդուրմա ցանած բաղրջանը կարելի յե թողնել հենց տեղում՝ առանց փոխադրման և այդ գեղքում բույսերի աճեցողությունը շատ քիչ ե տարբերվում ջերմոցային լավագույն սածիւներից։ Բաղրջանի ձմռացանը դեռ արտադրության պայմաններում մասսայականորեն փորձված և ստուգված չե, սակայն յեղած տվյալները գալիս են ասելու, զոր ձմռացանը մեծ հեռանկարներ ունի մեր դաշտավայրի համար։ Այս խնդրի ուսումնամիջությունը դեռ շարունակվում ե Զոնալ կայանում և զուտով կփոխադրվի արտադրության մեջ՝ ստուգելու համար։

Բաղրջանի սածիւների բուծումը պետք ե տանել այնպես, զոր սածիւլը փարթամ արժատական սիստեմ առաջացնի սածիւնոցում, զորովկետ բաղրջանն ունի խորը գնացող զիսավոր արմատ, զորի ճյուղավորումները թեև բավականի յերկարում են, բայց առատ մաղարմատներ չեն առաջացնում, ուրիշն՝ անհրաժեշտ ե փարթամ արժատական սիստեմ ստեղծել հենց սածիւնոցում, մանավանդ, զոր նրա ցողունը շատ շուտ փայտանում ե և հետազայում—դաշտում տնկելուց, անգամ բգլիցից հետո ել նոր արմատներ չի առաջացնում, ինչպես զա անդի յե ունենում տումատի գեղքում։ Խոկ մատղաշ հասակում բաղրջանի ծիլերի ցողունը հողով ծածկելուց առաջացնում են մաղարմատների փարթամ սիստեմ և այսպիսով աղանովում բույսի հետաքա լավ անունդը։

Լավ սածիւլ ստանալու համար սերմը ցանում են շարքերով՝ շարքը շարքից 6—8 մմ հեղափորության վրա, և ծիլերը յերեալուց հետո նոսրացնում 5—6 սմ-ի վրա, այնուհետեւ առաջին տերը յերեալու ժամանակ կատարում են ծիլերի բուգլից, կամ ուղղակի հող են մազում և ծածկում ծիլերի ցողունը հողով մինչև շաքիլատերները և լավ ջրում։

Սյդպիսով սածիւն առանց պիկիրովկայի լավ պարզանում և և առաջացնում մեծ քանակությամբ մաղարմատներ։ Պիկիրովկայով սածիւն մեծացնելը միտք չունի, քանի զոր այդ ձեն ավելի թանգ և նստում, պահանջում է ձեռքի մեջ աշխատանք և հետ և գցում սածիւլը 10—15 որով։

Պաղաբանջարաբուծական Զոնալ կայանի մի շարք տարիների փորձերն ապացուցել են, զոր պիկիրովկան վոչ մի տուավելություն և իմաստ չունի, յեթե սածիւլի մեծացումը տարգի վերաբերում նկարագրված ձեռվ։ Պիկիրովկան մեծ ողնություն կարող ե ցույց տալ այն գեղքում, յերբ ջերմոցների քանակը քիչ ե, և սածիւները հիմնականում պետք ե մեծացվեն տաք մարգերում կամ բաց սածիւլանոցներում, այս գեղքում սերմերը ցանում են ջերմոցում և բույսերը շաքիլատերն հասակում պիկիրովկայի յենթարկում տաք մարգերում կամ բաց սածիւլանոցներում։

## ԶԵՐՄՈՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԵԼՔ ՅԵՎ ՍԱԾԻԼԻ ԽՆԱՄՔԸ

Բաղրջանի սածիւներ պատրաստելու համար ջերմոցները պետք ե պատրաստել հետևյալ ձեռվ։

Ջերմոցների համար պետք ե ընտրել հարթ, չոր, բարձր գիրք ունեցող, ստորերկրյա ջրերից աղատ տեղ։ Ցանկալի յե վոր հողամասը քիչ թեքություն ունենա զեպի հարավ, սակայն այդ թեքությունը չանցնի 5°—8°-ից։ Ջերմոցները ըստ լայնության պետք ե դասավորել արեելքից գեղի արեմուտք, յերեսով զեպի հարավ, և շրջանակներին ել տալ փոքր թեքություն գեպի հարավ այնպես, զոր շրջանակի հյուսիսային կողմը բարձր լինի հարավայինից 8—10 սանտիմետրով։ Ջերմոցների տեղը պետք ե պաշտպանված լինի հյուսիսային և հյուսիսարեմայան ցուրտ քամիներից, վորոնք ուժեղ կերպով իջեցնում են ջերմոցի շերմատիֆանը։ Տեղն ընտրելուց հետո փորում են փոսերը, վորոնց խորությունը բաղրջանի, տաքեղի և տումատի համար վերցնում են 50—60 սմ, քանի զոր նրանց ցանքը սկսվում է փետրվարի 2-րդ կեսից հետո և զրանից խոր փոս անելու կարիք չկա։ Փոսի լայնությունը պետք ե համապատասխանի շրջանակի մեծության, խոկ յերկարությունը դրվելիք՝ շրջանակների քանակին — 6—12 մետր։

Ջերմոցները տաքացնելու համար կարելի յե ոգտագործել տարրեր նյութեր՝ ելեկտրականություն, տաքացրած ջուր, գոլորշի գումազը, խառնազը և տնային աղը, սակայն մեզ մոռ հայտառանում, առայժմս տարածված են բացառապես զոմազրով տաքացրած ջերմոցները, զորի համար ոգտագործում ենք ձիու թարք պղը, զորակ շուտ տաքացրած ե բարձր ջերմություն առաջացնող աղը, զորի այրման ժամանակաշրջանը տեսում ե 31½ մինչև



4<sup>1</sup>/<sub>2</sub> ամիս Մյուս կենդանիների աղբը նույնպես կարելի յեռգ-տագործել ջերմոցները տաքացնելու համար, միայն թե սրանց ժակոտ կննությունը և թափանցկությունն ավելացնելու համար նրանց պետք են խառնել ծղոտ, թեփ, կամ ձիու թարմ աղբ:

Բացի ձիու, տավարի և գոչխարի աղբից, մերձքաքային անտեսություններում ջերմոցները տաքացնելու համար կարելի յեռ գործածել տների և փողոցների աղբը այսպես կոչված տնային աղբը, վորը թեև ուզ են սկսում տաքանալ, սակայն տաքանալուց հետո առաջացնում են բավական բարձր ջերմություն, վորը պահում 5—6 ամիս:

Ջերմոցները տաքացնող նյութերի տեղափոխումը տնտեսությունները պետք են սկսն աշնանից՝ ջերմոցների աշխատանքներն սկսելուց առաջ և շարունակեն մինչև վերջին ջերմոցների լցնելը:

Մեր սովորական ջերմոցների ամեն մեկ շրջանակի համար պահանջվում են, միջին հաշվով, 0,5 տոնն կամ մեկ մեծ սայլ գոմաղբ, վորից և պետք են յենել գոմաղբի պահանջը վորոշելիս:

Վաղորոք բերված գոմաղբն անժամանակ այրումից ու տաքանալուց ազատելու համար պետք են փոել 20—30 սմ հաստությամբ և ուժեղ կերպով նստեցնել, տրորիլ, ամրացնել, վորպետզի մեջը ոդ չանցնի ու այրումը չ"կսի: Այս ձեռվ նստեցրած շերտի վրա կարելի յեռնել յերկրորդ շերտը և նույնպես նստեցներ. Այդպես աղբը մնում է մինչև ջերմոցները լցնելու ժամանակը: Լցնելուց 6—7 որ առաջ փռած գոմաղբը խրխրում են, հավաքում իրար վրա և կազմում 2—2<sup>1</sup>/<sub>2</sub> մետր բարձրությամբ կույտեր: Կույտերը կազմելու ժամանակ գոմաղբը պետք են լավ քրքրեցնել և այնպես անել, վոր դղոտու գոմաղբը հավասարապես խառնվի վոչ ծղոտու աղբի հետ, վորոցեսզի հետագայում այրումը միահավասար չափով տեղի ունենաւ: Միաժամանակ պետք են տեսնել, վոր կույտ արած գոմաղբը լինի բավական խոնավ: յեթե նա չոր ե, ապա պետք են ջրել սառը կամ տաք ջրով: Այսպես կույտ արած գոմաղբը սովորաբար 3—4 որում տաքանում են և նրա մեջ սկսվում են այրման պրոցեսը: Յեթե գոմաղբը ձմռան ցրտերից այնքան են սառել, վոր կույտերում այս չետառում, այդ դեպում դիմում են արհեստական տաքացման—ջրում են կույտը 2—5 դույլ յեռման ջրով, կամ կույտի մեջ տաքացրած քարեր են դում, կամ թե չեն սառած կույտի ներսը դնում են վորոշ քանակությամբ արդեն տաքացած ձիու թարմ աղբը: Այրման պրոցեսը սկսվելուց հետո կույտը ամրողապես սկսում է:

Պարանա, վորպես որենք ջերմոցը կարելի յեռնել միայն այն ժամանակ, յերբ գոմաղբը լով տաքացնել են, հակառակ դեպքում՝ լցնելուց հետո նա կարող են սառել: Ջերմոցը լցնելու ժամանակ գոմաղբը նորից պետք են խառնել և խրխրել այնպես, վոր նա միահավասար դարսվի ջերմոցի ամբողջ տարածության վրա: Գոմաղբը պետք են լցնել փոսի բերանի հետ հավասար, վորովհետեւ հետագայում նա այրման հետեւնքով կնստի և կիջնի:

Ջերմոցի փոսը տաք զոմ աղբով լիքը լցնելուց հետո դնում են վրան արկղը, վորը տեղ վորում են այնպես, վոր յերկու յերկար կողմերը լինեն ուղիղ հորիզոնական վիճակում, իսկ կողքի կողմերին տալիս են 2—5° թեքություն, այսինքն հյուսիսյին կողմը բարձրացնում են հարավայինից 10 սմ, վորով և ամրող ջերմոցի շրջանակներն ստանում են 2—5° թեքություն զեպի հարավ—լուսավորության պայմանները լավացնելու և անձրևի ջրերին հոսություն հարավորություն տալու համար:

Արկղն ամրացներուց հետո դնում են շրջանակները և ջերմոցը ծածկում ճիլոպներով կամ խսիրներով: Այս վիճակում ջերմոցը մնում է 1—2 օր, վորի ընթացքում տեղի յեռնենում գոմաղբի ամենասուժեղ այրումը և գոմաղբը տալիս են նստվածք: Այդ ժամանակ հարկավոր են գոմաղբը վոտքերով լավնստեցնել ու մի որից հետո լցնել ջերմոցի հողը:

Գոմաղբը նստեցնելիս պետք են տրորությամբ միահավասար ուժով և միահավասար ծանրությամբ, վորովհետեւ հետագայում ջերմոցի այն մասում, որ աղբը լով չի նստեցրած, այրում ավելի ուժեղ գնալու պատճառով կստացվի ալիքի ուժեղ նստվածք և կառաջանան փոսեր—ջերմոցը փոս կընկնի, իսկ դա կխանգարի հետագա բոլոր աշխատանքները:

Ջերմոցի հաղի—Ջերմոցային աշխատանքների ժամանակ մենք գործ ենք ունենում սովորաբար հողի արհեստական խառնություն հետո, վորը պատրաստված են տարբեր հողերի, փոտած գոմաղբի և ավազի խառնությներից: Ջերմոցի հիմնական մասը կաղմում են հումուսով հարուստ հողը, վորն ամեն տարի ջերմոցները մաքրելուց հետո պետք են թարմացնել, խառնիլով նրան վորոշ քանակի փոտած գոմաղբ, չիս հող կամ խամ հող, չողի արհեստական խառնություն կազմելիս պետք են յելնել հիմնական հողի հատկությունները: յեթե հիմնական հողը խամ ե, կամ առվույց ունուցի հող, կամ թե շիմի հող և ունի լավ կոնդիլային կազմվածք,

այդ գեղքում մի ժամ հոզին խառնում են 1—1,5 ժամ փտած ազգ  
և ½ ժամ ավագ:

Այս խառնուրդից հարկավոր և ամեն մեկ շրջանակի համար  
միջին հաշվով ½ ասյլ կամ ¼ խորանարդ մետր հող, ընդունե-  
լով հողաշերտի հաստությունը ջերմոցում 15—18 սմ. Զերմոցի  
հողը նույնպես պետք ե պատրաստել վաղորոք և պահել ամեն  
մեկ ջերմոցի համար իր համապատասխան տեղում:

Զերմոցի հողը լցնում են լավ խառնելուց և պատրաստելուց  
հետո. հողը պետք ե լինի «քեչ» վիճակում. յեթե հողը չոր և,  
ապա նախ պետք ե թեթև ջրել, հետո քեչ վիճակում լցնել ջեր-  
մոց: Վոչ մի գեղքում չոր հող լցնել և ապա ջերմոցում ջրել չի  
թույլատրվում: Հողը պետք ե ջերմոցի մեջ լցնել հավասար հաս-  
տության շերտով և մակերեսը պետք ե լինի միանգամայն հարթ  
և հորիզոնական: Վոչ մի թեքություն հողին տալ չի կարել, վո-  
րովհետեւ հետագայում ջրելիս ամբողջ ջուրը կկուտակվի ջերմոցի  
ցածր մասում, իսկ վերին մասը կմնա չոր:

Հողը պետք ե այսպես լցնել, վոր շրջանակը ծածկելուց հե-  
տո հողի մակերեսի և ապակու, մեջ 10—12 սմ աղատ տարածու-  
թյուն մնա: Հողը միահավասար լցնելուց հետո ջերմոցը նորից  
ծածկում են շրջանակներով և ճիշովով ու թողնում, վոր հողը  
առաջանա:

Զերմոցը լցնելու առաջին 2—3 որվա ընթացքում ջերմո-  
ցում առաջանում է 50—60° տաքություն և տեղի յե ունենում  
ամոնիակի ուժեղ գոլորշիացում. Ջերմոցում ստեղծվում են ցանքի  
համար աննպաստ պայմաններ. այդ ժամանակ ցանք անել չի  
թույլատրվում, վորովհետեւ բարձր ջերմաստիճանից և ամոնիա-  
կի գոլորշիներից սերմերը և ծիւրը կիշանան: Չի կարելի ցանել  
նաև չտաքացած, սաւը հողում. ուրեմն հողը լցնելուց հետո պետք  
ե սպասել 2—3 որ, վորպեսզի անցնի տեղի ունեցող այրժանու-  
թեղ պրոցեսը և հողում ստեղծվի նորմալ միապազաղ ջերմու-  
թյուն, վորից հետո նոր սկսել ցանքը:

Ցանքը ջերմոցներում պետք ե կտառել և նեծ զգուշությամբ  
և խնամքով կամ հատուկ ջերմոցային շրջացաններով, կամ ձեռ-  
քով՝ գծաշարի տակ: Ցանելուց առաջ ջերմոցի հողը ձեռքի փոց-  
խով պետք ե լավ հավասարեցնել և հարթաշափով ստուգել, վոր-  
պեսզի վոչ մի թեքություն չլինի: Զերմոցի ամեն մի շրջանակի  
տակ ցանում են 20—30 գրամ բաղրջանի սերմ: Ցանած սերմերը ծած-  
կում են թեթև ավազախառը հողի բարակ չերտով կամ ավազով և ան-

միջապես ջրում չառ մտնը անցքեր ունեցող ցնցուղով: Սովորա-  
կան անցքեր ունեցող ցնցուղներով ջրել չի կարելի, վորովհետեւ  
ջրի ուժեղ հոսանքը լվանում և սերմը ծածկում հողի բարակ չերտը,  
մերկացնում եսերմերը և նրանց կուտակում ջերմոցի մի անկյու-  
նում: Միանգամից չպետք ե շատ ջրել, վորպեսզի լճացում չտ-  
առաջանա: Ջուրը պետք ե տալ քիչ-քիչ և այնպես, վոր ջուրն առ-  
աջնանարար ծծվի հողի ամբողջ չերտի մեջ:

Ջրելուց հետո ջերմոցը ծածկում են շրջանակներով և վրան  
դցում ճիրպաներ, խսիրներ, կամ մեջուկի ու փալասի կտորներ,  
վորոնք մնում են նաև ցերեկվա ընթացքում, վորպեսզի ջերմոցը  
տաք մնա և չչորանա արեկից (ծիւրը համար լույսն անհրաժեշտ  
չե): Ջերմոցը ծածկած պահում են մինչեւ ծիւրը հատ ու կենա  
յերեալը, վորից հետո ծածկոցները վերցնում են և ապակիները  
լով մաքրում՝ ծիւրին որևէ առատ լույս տալու համար.  
ստկայն չպետք ե մոռանալ, վոր ծածկած ժամանակ ել ջերմոց-  
ները հարկ յեղածին չափ պետք ե ողափոխել:

Մինչեւ ծիւրը յերեալը պետք ե որպական 2—3 անգամ դի-  
տել ծածկած ջերմոցը, ստուգել՝ արդյոք ծիւրը չեն յերեալացներ,  
վորպեսզի ժամանակին վերցվեն ճիրուպները: Փորձը ցույց ե տվեր  
վոր մատողաշ ծիւրը ջերմոցում 2—3 ժամ ծածկած մնալու գեղ-  
օսմ ուժեղ կիրպով ձգվում են և անպետքանում: Միշտ պետք  
ե հիշել, վոր ջերմոցում բույսի լավ զարգանալու համար անհրա-  
ժեշտ պայմաններից ամենաաննպաստ դրության մեջ և լույսը,  
ուստի պետք ե աշխատել, վոր ծիւրը յերեալու որից սածիլի  
անցողության ամբողջ ժամանակաշրջանում լույսը լինի ասատ:  
Դրա համար ջերմոցի ապակիները միշտ պետք ե պահել միանգա-  
մայն մաքուր վիճակում: Միշտը յերեալուց հետո ջերմոցի խնամ-  
քը կայանում ե ծիւրը նոսրացման, բուզլիցի կամ հող մաղելու  
և խնամքի այլ ձևերի մեջ, ինչպես են քաղանը, փխրեցումը,  
ոդ տալը և ջրելը: Առանձնակի ուշադրություն պետք ե դարձնել  
այս միջնոցառումների ժամանակին ու վորակով կատարելու վրա:

Ցերեկվա ընթացքում, նայած յեղանակին, ջերմոցի ոգն  
անհրաժեշտ թարմացնել՝ պետք ե ոդ տալ: Այս նպատակով պետք  
ե ունենալ աստիճանների բաժանած համապատասխան փայտյա  
հենարաններ, վորոնք շրջանակի տակ գնելով՝ բարձրացնում են  
դրա մի կողմը ցանքացած բարձրության վրա: Ողափոխությունը  
պետք ե կատարել ամեն որ, անդամ ամենացուրտ որերին, միայն  
թե ցուրտ որերին շրջանակները յերկար ժամանակ բարձրացրած

պահել չի կարելի, պետք ե նրանց հաջորդաբար մեկ-մեկ բարձրացնել, պահել 1—2 ըոտք և իջեցնել: Այդպես մի յերկու անգամ ամեն մի շրջանակը բարձրացնելով կարելի յե բավարար շափով ներմոցի ողը փոխել և մաքրել: Յեթե յեղանակը շատ ցուրտ չէ, սպառափոխությունը պետք ե կատարվի ավելի յերկար ժամանակով՝ 1—4 ժամվա ընթացքում, իսկ հետագայում, յերբ որեւը տառքանան անգամ ամբողջ որվա ընթացքում, Փետրվար-մարտ ամիսներում, դաշտավայրի պայմաններում, ցերեկները հնարավոր և անգամ 2—3 ժամով շրջանակները բոլորովին վերցնելու որ տալիս շրջանակները պետք ե բարձրացնել քամու հակառակ կողմից, վորպեսզի ջերմոցը չսառչի, իսկ հանդարտ յեղանակներին ավելի նպատակահարմար ե շրջանակները բարձրացնել ներքեւ, հարավային կողմից, վորովհետև միշտ խոնավությունն ավելի շատ կուտակված ե լինում ջերմոցի հարավային պատի մոտ: Հակ և ոդ տալ նաև յերկու հակառակ կողմերից, այսինքն մեկ շրջանակը բարձրացնել հարավից, մյուսը՝ հյուսիսից, այդպիսով ստեղծել ոդի հոսանք, վորով ավելի լրիվ ոդափոխություն տեղի կունենա: Ոդ տալիս միշտ պետք ե հետեւ, վորպեսզի ջերմոցի նորմալ ջերմաստիճանը չիջնի: Բաղրջանի նորմալ անեցողության համար ջերմոցի ջերմաստիճանը չպետք ե իջնի 25° Ց.ից. բայց և շատ տաք միջավայրը + 35—40° Ց նույնպես վնասակար ե: Զերմությունը դիտելու համար պետք ե ջերմոցում ունենալ ջերմաչափ, վորը տեղափորել ջերմոցի սավեր տեղում:

Ջերմաստիճանը կանոնափորելուց և ոդափոխությունից զատածիլի հետագա խնամքը կայանում է ջրելու, փիրեցման, քաղանի և սածիլները զրսի պայմաններին սովորեցնելու մեջ:

Ջերմոցները ջրում են սովորաբար ցնցուղներով, սակայն այս ձեւը պահանջում ե շատ ձեռքի աշխատանք, և կարելի յե շատ հեշտությամբ սոցիոնալիզացիայի յենթարկել հետեւյալ պարզ ձեռք: Ջերմոցների մոտ պատրաստում են ջրի ավազան, վորից չուրը նաև սոսով կամ պոմպով հանում են և սեղինե խողովակով մոտեցնում ջերմոցներին և ջրում:

Սածիլները պետք ե ջրել ըստ բույսի պահանջի: Ջրի խընդիրն առաջնակարգ խնդիրներից մեկն ե, վորի աչքաթող անելը կամ անկանոն կատարելը կարող ե վոշնչացակ ամբողջ ջերմոցը: Զմռան և վաղ գարնան ամիսներին սածիլները սառը ջրով ջրել, չի կարելի, այլ պետք ե վերցնել սենյակի ջերմության ջուրը: Ջրել պետք ե հավասար, այնպես վոր ջերմոցի բոլոր մասերն ել:

Հավասար չափով խոնավանան, այնուհետև պետք ե ջրել այնքան, վոր ջերմոցի հողաշերտը ամբողջովին լավ ծծվի ջրով և խոնավանա, Զրելու քանակը և ջրի չափը կախված ե տարվա յեղանակից և գոլորշիացման աստիճանից: Անհրաժեշտ ե ուշուուղ ջրել, լավ ջրել և ամեն մի ջրից հետո հողի քեցա յեկած ժամանակ խրխրել, Դա կնպաստի և խոնավության պահպանման, և ողի թափանցելուն հողի մեջ, վորը խոշոր նշանակություն ունի բույսերի անեցողության համար: Յերբ ջերմոցը լավ չեն ջրում, այսինքն քիչ են ջրւը տալիս և հողի ամբողջ ջերտը չի խոնավանում, կարիք ե լինում հաճախ ջրելու, մանավանդ մարտ ապրիլ ամիսներին: Շատերն ամեն որ ջերմոցը թեթև ջրում են—«զաղ են տալիս», ստացվում ե այն տպագրությունը, վոր իր ջուր շատ են տալիս—«ամեն որ ջրում են», մինչեւ բույսերը ջրի պակառությունից չորանում են:

Մարտ և ապրիլ ամիսներին մեղմ անձրև գալու դեպքում ջերմոցները պետք ե բաց թողնել անձրևի տակ: Հետեւյալ խնդիրը, սածիլների խնամքի տեսակետից, քաղանքը և փիրեցումն վորոնց վրա նույնակե լուրջ ուշացրություն պետք ե դարձնել և կատարել ժամանակին, մանավանդ փիրեցումք:

Պետք ե միշտ հետեւ, վոր սածիլն իր զարգացման ընթացքում լինի մուգ կանսչ գույնի, չեղնակի, չճպի և չճիվանդանա: Սածիլի գանդաղ անեցողության դեպքում խորհուրդ ե արվում: Ջրել ազոտական հանքային պարարտանյութերի լուծով: յթով, որինակ՝ ծծմբաթթվային ամոնիումով, կամ սելիտրայով՝ վերցնելով 12 լիտր ջրին (մեկ վեղրո) 20—25 գրամ պարարտանյութ:


Սածիլի մեծանալու հետ զուգընթաց, անհրաժեշտ ե նրան սովորեցնել դրսի պայմաններին—սածիլը ասրացնելը: Դրա համար աստիճանաբար, յեղանակները տաքանալու հետ միասին, սկսում են ցերեկներն ոդ շատ տալ, ավելի յերկար ժամանակ ոդ տալ, և ամբողջ ցերեկը ջերմոցը բաշ պահել: հետո գիշերները ճիլունները վերցնում են, այնուհետև սկսում են զիշերներն ել բարակ ոդ տալ, աստիճանաբար՝ որեցոր զիշերվա ողն ավելի շատացնել, իսկ սածիլը դաշտ գուրս բերելուց 7—10 որ առաջ սկսում են արդեն գիշեր ու ցերեկ ջերմոցները բաց թողնել, միայն թե առաջին որերը պետք ե սահմանել զիշերվա հերթապահություն, վորպեսզի ոդի ջերմության հանկարծակի ուժեղ փոփոխման դեպքում անմիջապես ձեռք առնվեն միջոցներ՝ ջերմոցները ծածկելու համար:

Բացի ջերմոցներից, վաղահառ սածիլներ կարելի յեւ ստանալ նաև ստաք մարգերում, վորոնք նույն ջերմոցներն են, սակայն սպելի սազր և առանց ապահովաց շրջանակների:

Լավ մշակած սածիլը դաշտ գուրս բերելու ժամանակ պետք է ունենա 5—6 տերե, լինի կարճ, հասու և մուգ կանաչ գույնի:

Դեռային գոտու պայմաններում բաղրջանի սածիլը ջերմոցներում պետք և պահել մինչև առաջին ծաղիկների կոկոնավորումը, վորպեսզի դաշտ գուրս բերելուց հետո նա չուտ ծաղկի և շուտ պտղաբերի: Տաք մարգերում սածիլի խնամքը նույնին ե, բնչ վոր ջերմոցներում, իսկ բաց սածիլանոցներում ավելի պարզ և հանրածանոթ ե: Բաց սածիլանոցում առանձնակի ուշադրություն պետք և դարձնել սածիլանոցի հոգի ընտրության և լրիվ պարարտացման վրա:

Բաղրջանի սածիլը պետք և տնկել անպայման քեզ հողում, զորի համար հողամասը նախորոք ջրում են և քեզը գալուց սածիլը դաշտ փոխադրում:



Նկ. 5. «Բրույեր» սիստեմի սածիլ առկող մեքենա:

Վորպեսզի բաղրջանը տնկվի ուղիղ ջարքերով, սածիլը պետք և տնկել կամ հատուկ սածիլ տնկող մեքենայով, որինակ «Բրույերի» մեքենան, իսկ մեքենաների բացակայության դեպքում պետք և մարգերում ուղիղ գծեր քաշել և նրանց վրա տնկեր Այդ նպատակի համար գոյություն ունեն մի ջարք պարզ գործիքներ — մարկյորներ, վորոնցից մի մասն ունենալով լիսեափ վրա ամրացրած թաթեր, զործիքի առաջ ընթանալու

առաջի միասին հողում գծում և իրարից ցանկացած հեռավորության վրա ուղիղ անընդհատ գծեր—շարքեր: Մեքենաների մյուս տեսակները բաղկացած են յերկու կամ յերեք պատվող անիմըներից: Արանց վրա ցանկացած հեռավորության վրա դաստիքած են փորող թաթեր, վորոնք մեքենայի առաջ շարժվելու հետ միասին, ուղիղ շարքերով հավասար հեռավորության վրա բացում են փոքրիկ փուներ—նշաններ, վորոնց մեջ հեռավայրում և տընկված և սածիլը:

Ուղիղ և հավասար շարքերով տնկելը մեքենայացված մշակության կիմական պայմաններից մեկն եւ:

Առջրգային Միության շատ լրջաններում սածիլի տնկումը վաղուց կատարվում և տնկող մեքենայով, իսկ մեզ մոտ՝ Հայաստանում, զժքախտաբար, այդ մեքենան մինչև որս գործածության մեջ չեւ:

Ինչպես արգեն վերն ասացինք, սածիլը պետք և տնկել անդայման քեզ հողում և անմիջապես ջրել Բաղրջանի սածիլը խորը չեն տնկում, վորովհետեւ նրա ցողունից մաղարմատներ չեն առաջանում, իսկ խոր անկելու հետեւնքով յեղած արմատները չնշանազդ են լինում, և սածիլը չի կպչում:

Այսպիսով, ուրեմն՝ սածիլը պետք և տնկել արմատավզից 2—3 մմ խորը և լամ ամբացնել հողում: Սածիլը պետք և տնկել հողով: Սածիլն անպայման կով ժամանակ պետք և տնկել՝ կամ ասավոտյան մինչև ժամը 10-ը, կամ յերեկոյան ժամը 4-ից հետո, վարովհետև սածիլվելով մայիս—հունիս ամիսներում, ցերեկը տընկած սածիլն իսկույն թառամօւմ ե, չի կպչում, և առլին և մեծ ռոկո չըներ:

Սածիլումից 3—4 որ հետո պետք և տալ սածիլին առաջին վեցետացիոն ջուրը, վորի ժամանակ կատարել նաև չըսնած սածիլների վերանորոգում: Համեմատյն գեղո, վերանորոգման աշխատանքները պետք և վերջացնել սածիլումից 7—10 որից վոչ ուշ:

Բաղրջանի սածիլն սկզբնական լրջանում շատ դանդաղ և անում, ներքեկի տերենները հաճախ չորանում են, և սածիլը տնկելուց 4—5 որ հետո դաշտն այնպիսի տեսք և ունենում, առես թե սածիլները չեն բանել և չորանում են, մանավանդ, յեթե սածիլը մանր և յեղել, տնկվել և ցերեկվա շողին և ջրելուց ել տերենները լրով ծածկված են յեղել: Այդ բանից չպետք և փախենալ և հարկագոր և ստուգել սածիլի առմասն կօնը՝ ծայրաբաղրողն առողջ են թե վոչ: յելին նու կանաչ ե, ուրեմն սածիլը կկպչի, հարկագոր

միայն թեթև ջուր տալ և հողի քեցը գոլուց կատարել առաջին փխրեցումը։ Դրանից հետո սածիլր յերկար ժամանակ պետք է ջրից պահել, մինչև բույսերը սկսեն աշխատել և ընդունեն մոռզ կանաչ տեսք։ Սկզբնական շրջանում բաղրջանը հարկավոր ե ընդհանրապես քիչ ջրել և հաճախ փխրեցնել. այդ դեպքում նա ավելի լավ և աճում, իրացնում և արմատական սիստեմը և չի դեղնում։ Հետագայում՝ հունիս, հուլիս և օգոստոս ամիսներում, ըույսի փարթամ զարգացման և պտղաբերման շրջանում, ջրելու պահանջն ավելի յե շատանում և բաղրջանը ջրում նն, նայած կարիքին, ամեն 8—12 որը մեկ անգամ։

Ամբողջ վեգետացիայի շրջանում բաղրջանը ջրվում է 12—16 անգամ։

Բագրջանի մշակության խնդրում կարենոր տեղ պետք և տալ կանոնավոր քաղհանին և հաճախակի փխրեցումներին, վորոնք կատարվում են սեղոնի ընթացքում 3—4 անգամ՝ համապատասխան կուլտիվատորներով և մեքենաներով։

Քաղհանը բերքամշակման կարեռապույն աշխատանքներից մեկն ե, վորի նպատակն ե պայքարել մոլախոտերի դեմ և նրանք ժամանակին արմատախի, անելով՝ բարենպաստ պայմաններ ստեղծել կուլտուրական բույսերի նորմալ աճեցողության համար։ Մոլախոտերը լինելով ավելի դիմացկուն և ավելի արագ զարգանալով խլում են կուլտուրական բույսից սննդանյութերը և ջուրը, վատացնում են լուսավորության պայմանները և նպաստավոր միջավայր են ստեղծում հիգանդությունների և ֆիսատունների զարգացման համար։ Մոլախոտերը ուժեղ զարգանալով՝ ժամանակին պայքար չմղելու դեպքում, բոլորովին խեղդում են կուլտուրական բույսերը և փոչնչացնում ըերբը։

Բացի աճեցողության համար անհրաժեշտ աննդանյութեր և ջուր վերցնելուց, մոլախոտերը իրենց կանաչ մասսայով մեծ քանակությամբ ջուր են գոլորշիացնում և նպաստում հողի ջուռ չօրանալուն։ Այստեղից պարզ ե, թե վորքան խոշոր միաս կարող են հասցնել մոլախոտերը յեթե նրանց դեմ ժամանակին կանոնավոր պայքար չկազմակերպվի, այլ կերպ ասած, յեթե վորակով քաղհան չկատարվի։ Այս տեսակետից ավելի վասակար են բաղրմայա տակակավոր մոլախոտերը, վորոնց արմատախիլ անելք բավական դժվար ե՝ չնորիդ նրանց բազմամյա, կենսունակ և արագ զարգացող տակամիկների։

Մոլախոտերի դեմ պայքարը — քաղհանը մեղանից խլում և մեծ քանակությամբ բանվորական ուժ և արտադրական այլ միջոցներ, և անկազմակերպ ու վոչ ռացիոնալ պայքարի դեպքութ

և առեղծում ե մեծ լարվածություն տնտեսության աշխատանքների մեջ։ Ահա թե ինչու մեր սոցիալիստական խոշոր տնտեսությունների պայմաններում քաղհանի աշխատանքների ստախանովյան մեթոդներով աացիոնալ և ժամանակին կազմակերպումը ու նրանց մեքենայացումը կարևորագույն և վճռական նշանակություն ունեն բերքատվության ռարձրացման գործում։

Ամեն տարի մեր տնտեսությունները միլիոնների հասնող գումարներ են ծախսում քաղհանի վրա և չնայած դրան դեռ մեր դաշտերը բոլորովին մաքրված չեն մոլախոտերից։ Դրա պատճառը այն է, վոր հաճախ մեր տնտեսություններում քաղհանը համարվում անորակ, անժամանակ, ուշացած և վոչ կազմակերպված։ Մոլախոտերի դեմ պայքարելը պետք և սկսել հենց աշնահերկի, ժամանակից, հավաքելով և գաղտից դուրս տանելով բազմամյա մոլախոտերի՝ չայիրի և դանդուրդանի տակորիկները։ Աշնանավարը միաժամանակ նպաստում և միամյա մոլախոտերի վոչնչացմանը՝ հողի տակով գետնի յերեսին ընկած նրանց սերմերը, վորոնք հողի խոր ջերտերում փառում են և չեն ձլում։ Այնուհետև չայիրը և դանդուրդանը պետք և հավաքել նաև գարնան կրկնահերկի և փողխի ժամանակ, վորով նպաստած կիմնենք քաղհանի հետագա աշխատանքների կիսով չափ կրծատելուն։

Այս միջոցառումները թեև խոշոր չափով վոչնչացնում են մոլախոտերը, բայց նրանց խպառ չեն վերացնում, այնպես վոր գեգետացիայի ընթացքում անհրաժեշտ և լինում կազմակերպել նաև անմիջական պայքար արգեն ծլած մոլախոտերի դեմ։ Այս պայքարը պետք և սկսել վորքան կարելի յե շուտ, յերբ մոլախոտերը շատ չեն բարձրացել և կուլտուրական բույսից շատ սնընդանյութեր և ջուր չեն խլել։ Մոլախոտերի դեմ մատղաշ հաստիում պայքարելը անհամեմատ հեշտ և թե բանվորների և թե մեքենաների աշխատանքի տեսակետից, վորովին այդ հասակաւմ նրանք հեշտ և արմատախիլ անելը

Վորակով քաղհանը պահանջում ե մոլախոտերը արմատով հանել և վերացնել նրանց նորից ծլելու հնարավորությունը։ Յեթե մոլախոտերը արմատով չեն հանվում, այլ միայն յերեսից են կտրվում, մի քանի որից հետո նորից կանչում են և այս անգամ ավելի ճյուղավորված և ավելի փարթամ զարգացած։ Սրա դեմն առնելու համար անհրաժեշտ և քաղհանը կատարել այն ժամանակ, յերբ մոլախոտերը նոր են սկսում բարձրանալ և կուլտուրական բույսին չեն ծածկել։ Քաղհանը պետք և

կառարել հողի քեշ վիճակում, վորոգեզի թե աշխատանքը հեշտ լինի  
և թե մոլախոտերը արմատով դուրս գան: Հողը չոր լինելու պետք  
քում քաղհանից մի 3—4 որ առաջ բաղրջանը պետք և ջրել և  
քեշը գալուց քաղհանել. դա կնպաստի նաև հողում խոնավու-  
թյան պահպանման:

Բաղրջանի առաջին քաղհանը կառարվում և յերկրորդ վե-  
րաբացիոն ջրից հետո, այսինքն սածիլումից մի 15—20 որ անց-  
էտապայում քաղհանը կրկնվում և 3—4 անգամ, նայած կարի-  
քին և մոլախոտերի զարգացման: Յերբեք չպետք և թողնել, վոր  
ժողախոտերը ծաղկեն կամ սերմակալեն, վորովհետև այդ ժամա-  
նակ նրանք արդեն բավական սննդանյութեր վերցրած կլինեն  
կողից և մեծ քանակությամբ ջուր գուրջիացրած. բացի այդ, մե-  
ծացած մոլախոտերի գեմ պայքարը կաղհանջի կրկնակի չափով  
բանվորական ուժի գործադրում, իսկ սերմակալած մոլախոտերի  
ուերմերը քաղհանի ժամանակ թափվելով հողի մեջ, նորից կնպաս-  
տն մոլախոտերի տարածման: Քաղհանել պետք և զոչ միայն  
բաղրջանի մարգերի մեջը, այլև բուրութերը, ջրառուները, և յեղ-  
րերի ճանապարհներն ու շրջակալիքը:

Այս բանը մեզ մոտ անտես են առնում և քաղհանում են  
միայն մարգերի մեջը: Սա խոշոր և անթույլատելիս սխալ և, վո-  
րովիետև թմբերի վրա, առուների յեղերի և ճանապարհ-  
ների վրա մնացած մոլախոտերը սերմակալելով, վարակման  
առատ աղբյուր են հանդիսանում մոլախոտերի տարածման հա-  
մար: Նրանց սերմերը քամու և ջրի միջնորով հեշտությամբ տա-  
րածվում են ամբողջ գաշտով մեկ և քաղհանած արտը մի քանի  
որից հետոնորից ծածկվում են մոլախոտերով: Սա վերը հիշված անո-  
րակ քաղհանի պատճառներից մեկն և, վորը պետք և անպայման  
ուղղել և մեր տնտեսություններում, վորպես որենք, մացնել թըժ-  
երի, ջրառուների, ճանապարհների և մարգերի քաղհանը, այլա-  
դեմ քաղհանը յերբեք ցանկացած արդյունքը չի տա:

Քաղրջանի քաղհանը, վորպես շարքաների բույսի, վորը մշակ-  
վում և 60—70 սմ միջլարքային տարածությունների վրա, պետք  
և անպայման կատարել կուլտիվատորներով—ձիու կամ բաղմա-  
շարք տրակառային կուլտիվատորներով, իսկ բույսերի միջի տա-  
րածությունը շարքերում պետք և քաղհանել ձեռքի հողու բազնե-  
րով: Բամբակի մշակության մեջ կուլտիվատորը արդեն մասսա-  
յականացրած գործիք և, վորի հֆեկտավորությունը պարզ և հաս-  
կանալի է մեր ամեն մի կոլախոտերականի համար: Նույնը պետք

և անել նաև բաղրջանի. տաքեղի և այլ շարքաներկ բանջարե-  
ղնների համար:

Փոքր տարածությունները անամերձ բանջարանոցներում  
կարելի յի քաղհանել ձեռքի հողուրագներով: Քաղհանած մոլա-  
խոտերը պետք և հավաքել և դաշտից դուրս տանել, ողտագործելով  
վորպես անասնակեր կամ թարմ վիճակում կամ սիլոսի մեջ: Մեր մի  
շարք տնտեսություններում այդ բանը չեն անում և քաղհանած  
մոլախոտերը թողնում են դաշտում, ասելով, վոր վոչինչ՝ կը որանա,  
կիտի և հողը կպարարտացնի. դա նույնպես սխալ է, վորովհետև  
մոլախոտերի վրա գտնվում են մեծ քանակությամբ հիվանդու-  
թյունների և մասսատուների սպորտ, ձկեր, հարսնյակներ, թըր-  
թուրներ և այլն, վորոնք մոլախոտերը դաշտում թողնելու գեպ-  
քում կվարակեն կուլտուրական բույսերը: Բացի այդ, բազմամյա-  
տակարկավոր մոլախոտերի մնացորդները ջրելուց հետո կարող են  
նարից կանաչել:

Այսպիսով, ուրեմն, ժամանակին կատարած և վորակով քաղ-  
հանն ե, վոր ապահովում և բույսի նորմալ զարգացումը և բորձը  
բնը քատվությունը:

Բացի քաղհանից, բաղրջանի մշակության մեջ մեծ տեղ  
պետք և տալ հողի փիրեցման, վորը կատարվում և ջրելուց հե-  
տո առաջացած կեղեկի վոչնչացման և հողի մազականությունը  
խախտելու նպատակով: Մեր բանջարանոցների պայմաններում  
ջրից հետո հողի յերեսը ուժեղ կերպով կեղեակալում է, վորպի-  
սի յերեսութը արգելում և ոդի ազատ թափանցելուն հողի մեջ և  
անող (անահերոր) պայմաններ և ստեղծում բույսի արմատական  
սիստեմի նորմալ զարգացման, ինչպես և հողում գտնվող միկրո-  
օրգանիզմների գործունեյության համար: Այնուհետև՝ կեղեկը նպաս-  
տում և ջրի ուժեղ գոլորշիացման հողի մակերեսից և չորացնե-  
լով հողերը՝ առաջացնում և խոնավության աննպաստ պայման-  
ներ: Այդ պատճառով հողի փիրեցումը նույնպես հանդիսանում է  
աղբոտեխնիկական կարենու ձեռնարկումներից մեկը: Մեզ մաս  
հաճախ քաղհանի և փիրեցման աշխատանքները շփոթում են և  
համարում մի աշխատանք, սակայն զա այդպես չե: Ճիշտ և, քաղ-  
հանի ժամանակ միաժամանակ տեղի յե ունենում հակ հողի  
փիրեցում, բայց կարող և պատահել, վոր հողը բոլորովիին ազատ  
և մոլախոտերից, իսկ ուժեղ կեղեակալման հետևանքով փիրե-  
ցումը անհրաժեշտ է:

Փիրեցման ժամանակ կեղեկի վոչնչացման հետեւնքով խախո-

վում և հողի մաղականությունը, կասեցվում և ջրի գոլորշացումը և ստեղծվում են ողաթափանցկության լավ պայմաններ, իսկ դրանք մեծ նշանակություն ունեն բույսի արմատական սիստեմի փարթամ զարգացման համար, ինչպես և միկրոռգանիզմների նորմալ գործունեյության համար, վորոնք քայլայիլով որդանական նյութերը և կապելով ողի պատ աղոտը, հարստացնում են հողը կարեոր սննդանյութերով. Փխրեցումը պետք է կատարել նույնպես հողի քեզ վիճակում, վորպեսզի կոչտեր չառաջանան, և նույն մեջնաներով, ինչ վոր քաղհանը: Քեզը թուած հոգում կատարած փխրեցումը վոչ մի արդյունք չի տալիս:

Բաղրջանի համար փխրեցումը առանձնակի նշանակություն ունի, վորովհետեւ նրա արմատները բավականին խորը գնալով՝ համեմատաբար քիչ են ճյուղավորվում և ողաթափանցկության վատ պայմաններում լավ չեն դարձանում:

Ամբողջ վեգետացիայի շրջանում բաղրջանին տալիս են 3—4 փխրեցում:

Սածիլումից 40—45 որ անց, բաղրջանը սկսում է ծաղկել և 18—25 որից տալիս և առաջին պտուղը Այսպիսով, սածիլումից 65—70 որից հետո տեղի յե ունենում բաղրջանի առաջին բերքահավաքը, վորից հետո ծաղկումը և պտղաբերումը շարունակվում ե անընդհատ, մինչև աշնան ցրտահարությունները: Առաջին բերքահավաքից հետո՝ ամեն 3—5 որը մեկ պետք ե բաղրջանի բերքը հավաքելու բոլոր բույսերի պտղաբերությունը միաժամանակ չլինելու հետևանքով ամեն անդամ բերքահավաքում են բույսերի  $\frac{1}{2}$ — $\frac{1}{3}$  մասը, այնպես վոր սեղունի ընթացքում տեղի յե ունենում 10—20 բերքահաք, նայած փոփոխակին և կլիմայական պայմաններին: Ամեն մի թուփը միջին հաշվով տալիս է 4—6 պտուղ, ըստ վորում մի հեկտարից ստացվում է 150—200,000 հատ բաղրջան, վորը հավասար է 18—25 տոննի: Բերքը պետք է հավաքել պտուղների կիսահատօն վիճակում, յերբ միջի սերմերը զեռ չեն կարծրացել և նոր են կազմակերպվել, վորովհետեւ սերմակալուծ և հասունացած պտուղը սերմացուն անպետք և գործածության համար: Մեր աեղական բաղրջանները հավաքում են պտուղները 15—18 ստամետմետր յերկարության հասնելուց, յերբ 6—7 պտուղը քաշում է մեկ կիլոգրամ: Պտուղները գրանից ավելի մեծացնել չի կարելի, նաև նրա համար, վոր այդ գեպքում թե պտուղների վորակն է

բնկնում, և թե թփի պտղաբերությունը թուլանում: Զպետք ե մասնակ վոր բերքան վաքը միևնույն ժամանակ պտղաբերության կանոնավորումն ե, վորովհետեւ վորքան նորմալ և հաճախ ե կատարվում բերքահավաքը, այնքան թուլվն ավելի շատ պտուղ է տալիս և ընդհակառակը, վորքան յերկար ժամանակ են պտուղները մնում թփի վրա, այնքան շատ և թուլանում նրանց պտղապությունը:

Բաղրջանի բերքահավաքը պետք է կատարել առավոտյան հոգին կամ յերեկոյան: Շոգ ժամանակ բերքահավաք կատարել չի հանձնարարվում, վորովհետեւ ցերեկվա շոգին թե բույսի, թե պտղի ջրի տոկոսը խիստ ընկած է լինում և քաղելուց հետո պըտուղները հեշտությամբ են: Հավաքած բերքը զաշտում արելի տակ թողնել չի կարելի: պետք է անմիջապես փախադրել ծածկի տակ, կամ յեթե դաշտում ե կուտակված, նրա վրա փետել թարմ խոտ կամ վորես այլ ծածկոց: Բաղրջանը փոխադրում են և տարայով, և առանց տարայի, ուղղակի սայլերի մեջ ցված ձեռով: Տարայով փոխադրելիս խորնուրդ չի տրվում պարկերով փոխադրել, վորովհետեւ պարկերի մեջ բաղրջանը կորցնում է իր փայլը:

Սերմ ստանալու համար յերկրորդ կամ յերրորդ բերքահավաքի ժամանակ թփի վրա ընտրում են լավ զարգացած, տփակի պտուղներ և թողնում սերմացուի համար: Սերմաբուծական զատառարտ ցանքերը տնտեսական մյուս ցանքերից պետք է 1—1,5 կիլոմետր հեռու լինեն, վորտեսակի խաչաձև փոշոտում տեղի չունենա և սորտի մաքրությունը չաղտոտվի: Սերմացուները ընտրելուց առաջ համապատասխան կազմակերպությունների կողմից կատարվում ե սերմաբուծական ցանքի ստուգում՝ ապրորացիա՝ փոփոխակի մաքրությունը և միատեսակությունը պարզելու համար, վորից հետո արգեն արվում և համապատասխան վկայական և թույլավություն գտասորա սերմաբուծության համար: Ամեն մի թփի վրա պետք է թողնել 1—2 սերմացու դրանից պելի չի կարելի թողնել, վորովհետեւ այդ դեպքում թե սերմացուները լավ չեն կազմակերպվում և հասունանում, և թե թուլին ե թուլանում ու զաշտի բերքատլությունը ընկնում: Յեթե ամեն մեկ թփի վրա թողնենք մեկ սերմացու, այդ դեպքում կարելի կլինի ամեն թփից վերցնել նաև 3—4 ապրանքային պտուղները, իսկ 3 սերմացու թողնելու դեպքում բույսն ուժասպառ և լինում և ապրանքային պտուղներ քիչ ե տալիս:

Սերմացուն թողնում են թփի զրա մինչև աշուն և լրիվ հասունանալուց հետո քաղօւմ են ու մի քանի որ փռում արևի տակ, մինչև սերմացուների թառամելը և փափկելը, զորից հետո դանակով ճեղքում են պտուղը և սերմը հանում: Սերմը մսից հեշտ անջատելու համար հաճախ վարդում են հետեւյալ ձեռվ. սերմացուն գանակով կտրատում են մանր ժամերի և լցնում տակառի կամ զորես ուրիշ ամանի մեջ, զրան ջուր են լցնում և թողնում 2—3 որ, զոր մասսան թթվի և սերմերը շուտ անջատվեն մսից: Թակայն այս ձեզ լավ համարել չի կարելի, զորովինեռե թթվեցնելու հետեւանքով շատ հաճախ սերմերը ուշանում են, կորցնում իրենց ծլունակությունը և անպետքանում: Ավելի լավ և սերմի անջատելը առնել հետեւյալ ձեռվ. սերմացուն արեի տակ թառամեցնելուց հետո դնել զոտքի տակ, լավ տրորել ու փափկացնել այնքան, զոր նա ամբողջովին թուլանա ապա դանակով մի կողքից ճեղքելով, միջուկը լվանալ դույլում լցրած ջրի մեջ, զորի ընթացքում սերմերն ամբողջովին կանաչավեն մսից և կիթափվեն դույլի մեջ. այնուեւակ սերմերը լվանում են և փառա չորանալու համար: Սերմը պետք և չորացնել ստվերում և վոչ թե արեի տակ:

Մեկ սերմացու բաղրջանը առաջ և 10—18 զրամ սերմ, նայած փոփոխակին և սերմացուի մեծության: Քիչ սերմ պարունակող բաղրջաններն ավելի մասի և զորակով են համարվում: Սերմը գորշ-գեղնավուն և և ունի զորոշ փայլը: Բաղրջանի սերմերը մանր են, տափակ, յերիկամունքածե: Նորմալ սերմը պետք և ունենա 85—95% ծլունակություն, 95—98% մաքրություն և 85% տնտեսական պիտանիություն: Սերմը ծլունակությունը պահուն և 5—8 տարի, նայած դահելու պայմաններին:

## ԲԱԴՐՁԱՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ ՑԵՎ ՎՆԱՍՍՈՒՆԵՐԸ

Բաղրջանի հիվանդությունները և վասատուներն ընդհանուր առմամբ նույն են, ինչ զոր տոմատինը—նույն բակտերիոզը, պտուղների փտումը, սեպտորիքան և այլն հանդիսանում են նաև բաղրջանի հիվանդությունները, սակայն պետք և առել, զոր մեր դաշտավայրի չոր պայմաններում բաղրջանն առնատրակ քիչ և հիվանդանում: Համենայն գեպս նա տոմատից շատ և շատ դժմացկուն ե, և յեթե ջրելու սերմը նորմալ պահպանվի, բաղրջանը միանգամայն առողջ կմնա:

1. Ֆուզարիոզ.—Սա ամենատարածված հիվանդություններից մեկն ե, զորն առանձնակի զնաս և հասցնում հարավային տաք զրջաններում, զորովինետե սունկը լավ զարգանում ե բարձր ջիրմաստիճանի տակ: Ներս մտնելով բույսի հյուսվածքների մեջ, սնկի միցելիումը լցնում ե բոլոր անցքերը և տանող խողովակները, զորի հետեւանքով ջրի և սննդանյութերի մատակարարումը կանգ և առնում, բույսը թառամում ե և չորանում:

Հիվանդությունն արտահայտվում ե նրանով, զոր բույսի տերեներն սկսում են դեղնալ, կուչ գալ և աստիճանաբար չորանալ: Բույսի մնասված մասերի կտրվածքի վրա պարզ յերեւմ են սև, գորշ հյուսվածքներ, զորոնցով փուլարիոզը տարբերվում ե բակտերիալ թառամեռմից: Հիվանդություն առաջացնող սունկը հողում կարող ե ապրել մի քանի տարի և այդ պատճառով նրա գեմ պայքարելու կարևորագույն միջոցը պետք ե համարել ցանո քաշը առանառությունը. դիմացիուն փոփօխակների ընտրությունը և սածիլանցի հողի ախտահանումը:

2. Բակտերիալ բառամում.—Նույնպես տարածված հիվանդություն ե, մանավանդ տաք շրջաններում: Հիվանդ բույսերն սկզբնական շրջանում շարունակում են մաւալ կանաչ, բայց հետագայում, հիվանդություն ո ժեղ զարգացման ժամանակ, միանգամ դից գեղնում են և չորանում: Հիվանդ բույսերի ցողունի մեջը սկսացած և լինում և ցողունը կտրելիս դուրս ե գալիս զորշ պույնի կաթնանման հեղուկ: Թառամում առաջացնող բակտերիան անցնում ե բույսի վրա առաջացած վերքերից և ճեղքվածքներից բույսի ներբին հյուսվածքների մեջ և քայքայում ամբողջ բույսը:

Այս հիվանդությունը դեռ լրիվ ուսումնասիրված չե և այդ պատճառով պայքարի անմիջական միջոցներ առայժմս չկան: Վորպես ագրոկուլտուր ձևանարկումներ առաջարկվում ե նախկանունավոր ցանքաշարջանառության կիրառումը. զորի մեջ բագրը ջանը նույն դաշտը պետք ե վիրադանա 3—4 տարուց վոչ շուտ, այնուհետեւ ժամանակին և կանոնավոր պայքար մոլախուերի և վասատուների գեմ, առողջ սերմերով ցանք և սածիլանցի հողի ախտահանում:

3. Տերեվիսերի բծավարություն (սեպտորիա).—Այս հիվանդությունը մնասում ե բույսի միայն տերեւներին, զորոնց վրա սկրզբում առաջանում են սպիտակ մանր բծեր, կետեր՝ գորշ յեղբերով: Այդ բծերի հետեւանքով տերեւների նորմալ գործունեյությունը խախտվում ե, նրանք սկսում են թառամել կուչ գալ և

վերջը չորանալք Մնկի զարգացմանը նպաստում և ողի խռությունը և ջերմությունը: Սունկն ամենից լավ զարգանում է 25° ծելս. տակ: Տերևների չորանալն սկսվում է ներքեմի մասից և աստիճանաբար վեր և բարձրանում: Պայմանագրի միջոցներն են՝ դիմացկուն փոփոխակների ընտրությունը, կանոնավոր ցանքաշանառությունը, սածիլանոցի հողի ախտահանումը և սրբակութները 1°/0-ոց բորդոյան հեղուկով:

4. Բաղրջանի պտուղների նեխում. — Բաղրջանի պտուղների նեխումը կարող է առաջանալ մի շաբթ բակտերիաների և սնկերի գործունեյության պատճառով: Կարակված պտուղների վրա սկսում են առաջանալ աև կետեր, գործնք աստիճանաբար զարգանալով մեծանում են և բռնում պտղի մեծ մասը, վորից նա բոլորովին անպետքանում է: Տարբերում են պտուղների չոր և թաց փտումը վորը սկսվում է պտղի ծայրի մասից և աստիճանաբար տարածում ամրող պտղի վրա: Պտուղների նեխման արտաքին արտահայտությունները բավական նման են իրար, թեև առաջացման պատճառները տարբեր են: Վորպես ուստի միշտ առաջարկվում է՝ սերմերի ախտահանում, 1°/0-ոց բորդոյան հեղուկով սրսկում, կանոնավոր ցանքաշանառության կիրառում և հիվանդ պտուղների հավաքելը և այրելը:

Վնասատուներից բաղրջանին մեծ զնան է հասցնում կարագրինան, վորը կարող է բոլորովին վոչնչացնել բռայսի տերևները և չորացնել թուփը: Սրա դեմ պայքարի միջոցն է փարիզյան կանաչի լուծույթով սրսկելը և թրթուրների հավաքելը:

## ՑԱԳԴԵԼ

Ցագդելը (պղպեղ, բիրար) նույնպես հաբավային յերկրների բանջարանոցների հիմնական կուլտուրաներից մեկն և և խոչը տեղ և բռնում ժողովրդական սննդի գործում: Նա գործ և ածվում բազմատեսակ կերակուրների մեջ վորպես համեմունք՝ սուր հոտ և համ տալու համար: Այնուհետև տաքդելը գործ և ածվում թարմ, կանաչ վիճակում վորպես սալաթային բանջար և պահածոների արդյունաբերության մեջ՝ ֆարշիրովիկա պատրաստելու համար: Ցագդելից ձմեռվա համար մեծ քանակությամբ թթու յեն վնաս և վերջապես նրա հասած, կարմրած և չորացած պտուղների աղացած փոշին գործ և ածվում վորպես համեմունք՝ ձըման կերակուրների համար: Տաքդելի կարմրած մսից վորոշ տեղերում պյուրի յեն յեփում, վորը փոխարինում և տոմատի պյուրեյին, սակայն վորպես վիտամիններով և հանքային աղերով հարուստ սննդամթերքներ:

Այսպիսով տեսնում ենք, վոր տաքդելը բազմատեսակ կերակուրների և սալաթների անբաժանելի մասն է կազմում և պահածոների արդյունաբերության հիմնական հումույթներից մեկն և հանդիսանում: Առանձնակի զնահատելի յեն տաքդելի ֆարշիրովկայի պահածոները, վորոնք ձմեռվա տմիսներին, բաղրջանի և տոմատի պահածոների հետ միասին, անփոխարիննելի կեր են հանդիսանում, վորպես վիտամիններով և հանքային աղերով հարուստ սննդամթերքներ:

Ըստ պրոֆ. Ցերեվիտինովի՝ տաքդելի պտուղների մեջ կաշուր 89,56°/0, սպիտակուցային նյութեր՝ 1,49°/0, ճարպ՝ 0,95°/0, ածխաջրեր՝ 5,44°/0, թաղանթանյութ՝ 1,8°/0 և սոխիր՝ 0,69°/0:

Բացի այդ, տաքդելի մեջ կան վորոշ կծվություն տվող նյութեր, վորոնք քաքցը տաքդեղների մեջ գտնվում են շատ աննշան քանակությամբ:

Այսպիսով՝ պարզ են վոր տաքդղը, մանավանդ նրա քաղցր տեսակները, հանդիսանում են վիտամիններով հարուսա արժեքավոր սալաթային բանջարեղեններից մեկը, վորը, վորպես հիմնական սննդամթերք չլինելով հանդերձ, ախորժելի յե գարձնում կերակուրները և նպաստում լավ մարսողության:

Սակայն այստեղ նորից պետք են մատնանշել, վոր տաքդղը, վորպես տաք յերկրի բույս, մեր լեռնային գոտիներում և հյուսիսային շրջաններում շատ սահմանափակ են մշակվում, թեև նրա մշակությունը, ինչպես ցույց են տվել Պողաբանջարուծական Զոնալ կայանի փորձերը, շնորհիվ սելեկցիոն վազահամ սորտերի, ավելի հեշտությամբ կարելի յե բարձրացնել լեռնային գոտին, քանի բարդջանը, վորովնեսն տաքեղի դեպքում զործածվում են կիսահամ կանաչ պտուղները, վորոնց առաջանալու համար ավելի քիչ ջերմություն և ժամանակ են պահանջվում, քան բարդջանի համար:

## ՏԱԲԴԵՂԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՑԵՎ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԸ

Տաքդղը նույնպես պատկանում է մորմազգիների ընտանիքին: Սա միամյա բույս եւ ամուր, կանգուն և ճյուղավորված ցողունով, սրտաձև փայլուն տերևներով՝ մուգ կանաչ գույնի, առանց թափի և մազմզուկների: Ծաղկի կազմությունը նույն ե, ինչ վոր բարդջանինը՝ հիմք պսակաթերթ, հինգ բաժակաթերթ, հինգ առեջք և մեկ վարսանդ: Ծաղիկները սպիտակ գույնի յեն: Բեղմնավորումը կատարվում են մեծ մասամբ ինքնափոշումամբ, բայց հարավի տաք պայմաններում շատ հաճախ տեղի յե ունենում խաչածել փոշուում:

Տաքդղի պտուղները լինում են տարբեր ձեի և մեծության՝ մանր, կոնաձև, սրածայր, յերկարավուն, քառակուսի, լայն կոնաձև և կլոր տափակագուն: Կան նաև յերկանկյունանի, յեռանկյունանի և քառանկյունի տաքդեղներ: Զհասած պտուղը լինում են կանաչ, դեղնակառաջավուն, սպիտակ-կանաչավուն և սև գույնի: Խոկ հասած պտուղները և դեղին: Հստ քաղցրության, տաքդեղները լինում են կծու, կիսակծու և քաղցր:

Ինչպես բարդջանը, տաքդեղն ևս ունի գլխավոր արմատ, վորը հողում խորանալով՝ առաջացնում են մեծ քանակությամբ

տերկորդական ծյուղավորությունը, վորոնք տարածվում են հորիզոնական ձեռվի հողի վերին ջերտերում: Համեմատած մյուս բանջարեղենների հետ՝ տաքդեղները քիչ են ուսումնասիրված և նրանց շատ փոփոխակները դեռ նկարագրված չեն:

Մեզ մոտ մշակվող տաքդեղների փոփոխակներից ուշադրության արժանի յեն հետեւյաները:

1. Կալինսկի. — Ամենուրիք տարածված փոփոխակ եւ շատ կծու, պտուղներով: պատուղները նեղ են, յերկար, ծայրում կեռված և ծուռտիկ խորշումած մակերեսով: Պաղի յերկարությունը լինում է 10—12 սանտիմետր, իսկ տրամագիծը 1—1,5 սանաթիմ: Զհասած պտուղը կանաչ է, իսկ հասածը՝ կարմիր: Կան նաև զեղին տեսակները: Թուփը բավականին բարձր ե, ցրված ճյուղավորումներով: Պատուղները կախված են դեպի ներքեւ:

2. Կարդինալի. — Նույնպես կծու փոփոխակ ե, կարմիր, յերկար և սրածայր պտուղներով: Ցերկարությունը մինչև 20—25 սանտիմետր՝ 2,5—5 սանտիմետր տրամագիծով: Գործ ե ածվում թե պահածոների մեջ և թե կերակուրների մեջ զորացն գորպես կծու տաքդեղ:

3. Կարմիր յերկար. — Կիսակծու փոփոխակ ե՝ 10—15 մմ յերկարության և 3—4 սանտ. տրամագիծ՝ ունեցող յերկար, կոնաձև սրածայր պտուղներով: Գործածությունը նույն է, ինչ վոր նախորդ փոփոխակներինը:


4. Բոլղուցական հաղց. — Պտուղը խոշոր ե, քառակուսի ձեի, յերեք կամ չորս անկյունանի: Պաղի յերկարությունը 6—7 սանտիմետր ե, լայնությունը՝ 4—5 սանտիմ: Գործ ե ածվում գլխավորապես կանաչ վիճակում թե կերակուրների մեջ, թե պահածոներ պատրաստելու համար: Սա կոնսերվի արդյունաբերության հիմնական



փոփոխակն եւ հարմիք պառևզները քաղցր լինելու հետեանքով  
ա լացած վիճակում այսքան եւ գործածական չեն. ծողունը կա-



նկ. 7. Բուլղարական տարղեղ



նկ. 8. Տոմատանման տարղեղ  
սուսանալուց կարմրում եւ Պտուղները ցցված են դեպի վեր  
Բուլղարական բերքատու փոփոխակ եւ սակայն մեղ մատ ՀՍԽՀ-ում  
շատ սահմանափակ է տարածությունը:

5. Ցամատանման տարղեղ—  
(առտունդս). — Պտուղը կլոր-  
տափակավուն եւ, լավ արտա-  
հայտված կողրեցով և հասա-  
մուկ, հասունացած պտուղը  
մուգ-բալանման կարմիր գույ-  
նի յեւ Շնորհիվ իր պտղի ձեւ,  
շատ հարմար և ֆարշի համար,  
վորի հետեանքով գործ և ած-  
վում գլխովորապես պահա-  
ծոների որդյունաբերության  
մեջ. Դոյություն ունեն այս  
փոփոխակի կծու և քաղցր  
տեսակները. Ֆարշիրովկայի  
համար գործ են ածում բա-  
ցառապես քաղցր տեսակները.  
Հայտառանում քիչ տարած-  
ված փոփոխակ եւ.

6. Սալիստի (Յուլիո կօրօն).  
Սա պատկանում է սալա-  
մային քաղցր տարղեղների  
ահատկին: Պտուղները խոշոր  
են, համարյա քառակուսի ձեւ,  
ծայրի մասում քիչ նեղացած,  
3—4 անկյունանի: Տերնիկա-  
կան հասունացման ժամանակ  
պտուղն սպիտակ կանաչավուն  
ե (մոմանման) իսկ լրիվ հա-

սուսանալուց կարմրում եւ Պտուղները ցցված են դեպի վեր  
Բուլղարական բերքատու փոփոխակ եւ սակայն մեղ մատ ՀՍԽՀ-ում  
շատ սահմանափակ տարածությունը ունի:

7. Ցեղական կծու տաբղեղներ.—Վերոհիշյալ ստանդարտ փո-  
փոխակներից գտն, մեղ մուտ մեծ չափերով տարածված են, այս-  
պես կոչված տեղական կծու տաքղեղները: Մեր տեղական տաք-  
ղեղների ուսումնասիրություն և ստանդարտ նկարագրություն  
չունենալու պատճառով, ստիպված ենք տեղական բոլոր տաք-  
ղեղները մեղ անունով կոչել: Սրանք մանրապտուղ են, նուրբ  
մսով, յերկու, յերեք և հաճախ չորս անկյունանի. Կծու պտուղ-  
ներով: Շատ քիչ պատահում են նաև քաղցր տեսակներ, բայց  
ավելի տարածված են կծու տեսակները: Ցեղական տաքղեղները  
գործ են ածում գլխավորապես թարմ վիճակում վորպես սա-  
լաթային տաքղեղներ, այսուհետև խորոված վիճակում և թթու-  
ների մեջ: Կերակուրների մեջ գցում են միայն կծություն տա-  
լու համար: Պտուղները մանր են 4—6 սանտիմետր յերկար և  
թյան և 2—3 սանտիմ. տրամագծով: Թուփը կարծ ե, մանր, փայ-  
լուն, մուգ կանաչ գույնի տերեներով: Սրանք մեծ մասամբ մա-  
ահաս տեսակներ են և համեմատած բուլղարականի հետ քիչ  
բերք են տալիս:

### ՀՈՂԱՅԻՆ, ԿԼԻՄԱՑԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 8ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԶԵՎԸ

Տաքեղը Հարավային Ամերիկայի բույս ե, վորը Յերո-  
պա յեւ բերկի սպանացիների միջոցով XV-րդ դարում և սկզբ-  
նական շրջանում մշակվել ե վորպես գեկորատիվ բույս՝ զարդա-  
րանքի համար, Այսուհետև նրա մշակությունը արագ կերպով  
տարածվել և Յեկարպայի հարավային յերկրներում՝ Մալայայում,  
Փորթուգալիայում, Իտալիայում, Հունգարիայում, Բալկանյան  
թերակղղում և մեղ մոռ՝ Ղարիմում, Անդրկովկասում, Թուրքիա-  
տանում, Ուկրաինայում և այլ վայրերում:

Այսպիսով տաքղեղը տարածված և գլխավորապես առք  
յերկրներում և հյուսիսային շրջանների և մեր լեռնային գոտու  
համար մեծ նշանակություն չունի: Նրա աճեցնազության նվա-  
զագույն ջերմաստիճանը մինիմումը՝  $+12^{\circ}$  ծելս. ե, սպահմումը  
 $+22-25^{\circ}$  ծ. և մաքսիմումը՝  $35-40^{\circ}$  ծ.,

Այսպիսով նա միջին տեղն և բռնում տուժածի և բաղրջա-  
նի մեջ. նա ավելի ջերմասեր ե, քան տոմատը և ավելի քիչ  
քան բաղրջանը, այդ պատճառով ել տաքղեղի մշակությունն  
ավելի հեշտությամբ կարելի յեւ բարձրացնել լեռնային գոտին և

դեպի հյուսիս, քան բարձանը, մանավանդ զոր տաքեղի պառազ-ները կարելի յե գործածի շատ դեռահաս վիճակում, զորի հա-մար յերկար ժամանակ և մեծ ջերմություն չի պահանջլում: Այս խնդրում, ի հարկե, խոշոր դեր ունի նաև սելեկցիան:

Ինչ վերաբերվում է հողի պահանջին, տաքեղն ավելի պահանջկոտ ե, քան բարձանը: Նա պահանջում է թեթե, հա-րուստ, թափանցիկ և լավ տաքացվող հողեր: Սեահողերում կամ ավազակալային հարուստ հողերում տաքեղն առաջացնում է փարթամ թուփ և տալիս ե առատ բերք: Ցանքարչանառության միջ տաքեղը տեղալորվում է բարձանի հետ միասին թարմ պարարտացումից հետո յերկրորդ տարին, կամ այդ տեղը տոմա-տին հատկացնելու դեպքում, գնում ե 4—5-րդ դաշտերում, պա-րարտացվելով որդանական պարարտանյութերով, հեկտարին 30—40 տոնի հաշվով:

Հանքային պարարտանյութերից տաքեղին տալիս են՝ ազոտ պարունակող պարարտանյութեր հեկտարին 240—300 կի-լոգրամ և սուպերֆուֆատ 350—400 կիլոգրամ: Շատ լավ ար-դիունք ե տալիս որդանական և հանքային պարարտանյութերի միամսնական գործածությունը:

Ինչպես բարձանի համար, տաքեղի հողն ևս պետք է հեր-կել աշնանից 20—22 սանտիմետր խորությամբ, իսկ գարնանը կատարել կրկնահերկ: Պարարտացման ժամանակը և հողի մեջ մտցնելու ձեերը նույնն են, ինչ վոր ասացինք բարձանի համար:

Տաքեղի մշակությունը տարվում է լավ լուսավորված և հարավային թեքություն ունեցող հողերում, հարթ և յերկար մարգերով՝ շարքը շարքից 50—60 սանտիմետր և բույսը բույ-սից 30—40 սանտիմետր հեռավորության վրա, նայած փոփո-խակին և հողային պայմաններին: Մեկ հեկտարին պահանջվում է 30—40.000 հատ սածիլ, վորը ստանալու համար ցանքում ե 1 կիլոգրամ սերմ: Սածիլ պատրաստելու ձեերը և ժամկետները նույնն են, ինչ վոր ասացինք բարձանի հեկտամեր: Վաղահաս տաքեղ ստանալու նպատակով ցանքն անպայման պետք է կատարել ջերմոցներում կամ տաք մարգերում: Լեռնային գո-տիներում մշակությունը պետք է տանել բացառապես ջերմո-ցային սածիներով կամ դաշտավայրի բացությա սածիներով, վո-րոնք պատրաստ են լինում հենց այն ժամանակ, յերբ լեռնա-յին գոտու պայմաններում հնարավոր և լինում տաքեղը դաշտ դուրս բերել:

Սածիլը պետք է տնկել քեզ հողում՝ առավոտյան կամ յե-րեկոյան հողին: Սածիլը խոր տնկել չի կարելի, վորովհետև սա-նը բաղրջանի նման ցողունից մաղաքատներ չի առջացնում: Սածիլն անպայման պետք ե տնկել արմտասհողում: Սածիլումը և նրանից հետո ամբողջ խնամքը կայանում է քաղհանի, փիլրեցման և ջրելու մեջ, ճիշտ այնպես, ինչպես բաղրջան մշակելու գեպ-քում: Այս յերկու կուտուրաների մշակության ազդութեանիկան բոլորովին միանման և և կատարվում է միենույն մեքենաներով և գործիքներով, ուստի այն բոլորը, ինչ վոր ասացինք բաղը-ջանի համար, լիովին վերաբերում և նաև տաքեղին:

Տաքեղի պտուղների տեխնիկական հասունացումը համար-վում և նրանց կանաչ վիճակը, յերբ միջի սերմերը գեռ նոր են միսել կազմակերպվել և միւը նուրբ ե ու հյութալից: Տեխնիկա-կան հասունացումից մինչև լրիկ բուսաբանական հասունացում՝ այսինքն պտուղների կարմրելը տեղում և բավականին յերկար ժամանակ՝ 1—1,5 ամիս, վորպիսի ժամանակամիջոցում տաք-եղն անցնում է մի շարք անցողիկ շրջաններ՝ կանաչից աս-տիճանաբար դեղնանում և և ապա կարմրում: Այդ ժամանակ մին ել և սկսում կոպտանալ և գախտալ: Ամբողջ սեղոնի ըն-թացքում տաքեղը տալիս է 10—16 բերքահավաք, նայած կի-մայական պայմաններին և փոփոխակին: Ամեն անգամ հավաք-վում են միանման մեծություն և նույն հասունություն ունեցող պտուղները, իսկ մասամբ նույն և հաջորդ հավաքի համար: Նայած փափոխակին և մշակության պայմաններին, տաքեղը մեկ հեկտարից տալիս է 9—10 տոնն բերք: այսպիս բուլղարա-կան և մյուս խոշորապես տաքեղները տալիս են 9—10 տոնն, կան և մյուս սեղման մասնակիւթյուն և նույն հասունություն ունեցող պտուղները, իսկ մասամբ նույն և հաջորդ հավաքի համար:


Սածիլ ստանալու համար տաքեղի պտուղները թողնում են թփի վրա սինչև լիրիկ հասունացումը, այսինքն՝ լավ կարմրելը և մասամբ թառամելը: Սածիլացուն թողնում են յերկրորդ համ յեր-բորդ բերքահավաքի ժամանակ, ընտրելով ամեն մի թփի վրա լավ կազմակերպված 1—2 տիպիկ և առողջ պտուղ, իսկ մասամբ քաղում են տեխնիկական հասունացման շրջանում:

Ցեթե ցանքը կատարված և զուտ սերմաբուժական նպատակներով, այդ դեպքում ամեն մի թփի վրա կարելի յէ թողնել 3—4 սերմացու պտուզ, զբանից ավելի միտք չկա թողնելու, վորովհետեւ թուբիլ սերմացուներով ծանրաբեռնելու գեղքում բերքի ազբանքային մասը զգալիորեն պահասում եւ:

Լավ հասունացած սերմտցուն հավաքելուց հետո մի յերկու որ փուռմ են արևի սակ և ապա անջատում սերմերը, իսկ միայն չորացնում են և ազում կամ յեփում են պյուրե, ինչպես առմատի դեպքում: Սերմերը չորացնում են ստվերտա տեղում և ապա լցնում պարկերը և պահում չոր պահեստներում: Սերմը ծլունակությունը պահում է 5—6 տարի, բայց ցանելու համար պետք է վերցնել մի տարվա սերմ:

Տամդեղի հիվանդուրյաւնները յեկ վնասառաները նույնն են, ինչ վոր բաղրջանինը: Բացի այդ, առանձնապես աչքի յն ընկնում նրա տերմների բծավարությունը—ցերկասպորան-անտրակ նողը, վորն առաջացնում եւ պտուզների խայտաբղետություն և նեխում: Մըս գեմ՝ վորպես պայքարի միջոց, առաջարկվում է սերմերի ախտահանում 0,1% սուլֆայի լուծույթի մեջ՝ 5—10 քոպե տևողությամբ, վորից հետո 10—15 քոպե անհրաժեշտ և զավ լվանալ սովորական ջրում և ցամաքեցնել:

Ընդհանուր առժամբ ազբոտեխնիկական բալոր միջոցառումները ստախանովյան մեթոդներով կազմակերպելու, ժամանակին և խնամքով կատարելու գեղքում առաջեցն ունենում է փարթամ գարգացում և չի հիվանդանում, այնպես վոր մշակության ընթացքում համարյա թե սրսկումների կարեք չի զդացվում:



Պատ. Խմբ.՝ Հ. Մարգարիան

Տեխ. Խմբ.՝ Հ. Մուրադյան

Լեզվ. Խմբ.՝ Արք. Գրիգորյան

Մրբագրիչ Խ. Այվազյան

Թլագիթա լիազոր Ա-421, հրատ. № 302, պատվ. № 88, տիրաժ 3000

Հանձնված և պատագրության 1936 թվի գետրվարի 2-ին

Ստորագրված և տպագրելու 1936 թվի գետրվարի 20-ին

Տ 1/2 տպագրուկան թերթ՝ 1 տպ. թերթում 38,480 տպ. նշ.

Գյուղերտակ տպարան, Յերեան, Նալբանդյան № 11

30



160  
916 55 409.

14 MAR 1936

11

28073



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА И РАБОЧЕГО СОЛДАТА

С. ХАЧАТРИН

БАКЛАЖАН И ПЕРЕЦ

СЕЛЬХОЗГИЗ

1936

ПРВЫЙ